Բանտարկյալ

...նորից այստեղ Տեր Հիսուսի Անունով և լսել այն փառավոր և հզոր գործերի մասին, որ Դու նախկինում արել ես: Եվ հիմա մենք կանգնած ենք ակնկալիքով, դա բարձրացնում է մեր հավատքը և օծում է մեզ հավատալու, որ այն, ինչ խնդրել ենք այս երեկո, կշնորհվի մեզ: Դու ճանաչում ես յուրաքանչյուրին և նրանց խնդրանքները: Եվ մենք, հատկապես, խնդրում ենք նրանց համար, Տե՛ր, ովքեր մահամերձ են: Հոգու խաղաղություն տուր նրանց, եթե դեռ չունեն: Տուր բժշկություն նրանց մարմիներին: Շնորհի՛ր դա, Տե՛ր:

2 Օրհնի՛ր մեր հավաքույթը: Մենք, մենք խնդրում ենք, Տե՛ր, այս չորեքշաբթի օրվա երեկոյան աղոթաժողովին, որ, երբ մենք հավաքվենք, իմանալով, որ ուր որ երկու կամ ավել հոգի հավաքված լինեն, Դու կլինես մեզ հետ: Եվ խնդրում ենք, Տեր, որ այս երեկո տաս մեզ Քո Խոսքը: Խոսիր մեզ հետ, Տե՛ր, և կենդանացրու մեր սրտերը, որ իմանանք, թե ինչպես պետք է մեր կյանքը կարգապահության վարժեցնենք այս փառավոր ժամանակի համար, որը մեր առջևում է, որովհետև հավատում ենք, որ մոտենում ենք Տիրոջ Գալուստին:

3 Շնորհակալ ենք, Տե՛ր, որ մարդիկ հիմա սկսում են գտնել իրենց համար թանկ հավատքը, և իմանալ դրա նշանակությունը: Եվ իմանալով, նույնիսկ շնորհակալ ենք եկող ծառայությունների համար, հավատալով, որ Դու ինչ–որ բան կանես: Տե՛ր, մենք հին օրերի նման սպասում ենք անհամբեր, հավատալով, որ մոտ է ժամը, երբ Դու կբացես երկնքի պատուհանները և կթափես խոստումները, որոնք Աստված խոստացել է այս վերջին օրերում:

4 Հիմա մենք խնդրում ենք, Տե՛ր, որ լինես բոլորի հետ, ազգերի մեջ, քանզի այսօր այնքան ենք լսում ամենուր կարիքի մեջ եղողների մասին: Շնորհի՛ր նրանց իրենց խնդրանքները, Տե՛ր: Մենք նաև խնդրում ենք, որ տեսնենք Աստծո հզոր ձեռքը շարժվելիս ողջ աշխարհով մեկ այն մարդկանց շրջանում, ովքեր սպասում են այս փառավոր բանին:

5 Ներիր մեր մեղքերը: Հանդիմանիր մեզ, Տե՛ր, Քո Հոգով և Քո Խոսքով, որպեսզի կարողանանք խրատել

ինքներս մեզ հնազանդ ծառաների, Աստծո կամքի մեջ հնազանդ ծառաներ: Թող հիշենք մեր սրտերում և մտածենք, թե ինչ են արել վաղ շրջանի քրիստոնյաները: Թե ինչ տեսակի մարդկանց կհանդիպեինք, եթե ծանոթանաինք նրանց, ովքեր անձնական շփում են ունեցել Քեզ հետ: Ինչպես պետք է, որ իրենց երեսները փայլեին հավատքով և ուրախությամբ: Ինչպես իրենց կյանքերը պետք է, որ կենդանի Աստծո Խոսք դարձած լինեին, հենց «գրված թղթեր՝ ամեն մարդկանցից կարդացված» երբ նրանք քայլում են մարդկանց մեջ: Ո՛վ Աստված, մեկ անգամ ևս շնորհիր դա:

6 Թող մեր կյանքերը այնքան հպատակված լինեն Քեզ, որ Սուրբ Հոգին Ինքն ապրի մեր միջոցով և խոսի մեր միջոցով, Տե՛ր: Թող մեր մտքերում հիշենք, երբ քայլում ենք փողոցով և շփվում ենք աշխարհի հետ, որ չպիտի լինենք նրանց պես: Եվ մենք մի կողմ ենք քաշվում և զիջում ենք իրենց տեղը, Տե՛ր, իրենց օրինական դիրքը այստեղ՝ երկիր վրա: Մենք կզբաղեցնենք հետին տեղերը, իմանալով, որ մենք այլ աշխարհի պատգամավորներ ենք: Մենք ունենք մի թագավորություն, որ զորությամբ է գալիս, Տե՛ր: Եվ մեր փառավոր Թագավորը շուտով կգա և կստանձնի բոլոր թագավորությունները, որոնք Նրա տիրության մեջ են գտնվում: Եվ Նա կիշխի և կթագավորի, հազար տարի Նրա հետ այստեղ՝ երկրի վրա, և հավիտյան կլինենք Նրա հետ:

7 Սրանով մեր մտքերում, Տե՛ր, մենք հիմա սպասում ենք մեր աղոթքի պատասխանին: Մենք նայում ենք մեր դավանանքին: Եթե մենք արել, ասել կամ մտածել ենք որևէ մի բան, որը հակառակ է եղել Քո փառավոր կամքին, թող Հիսուս Քրիստոսի Արյունը մաքրի մեզ:

8 Առաջնորդի՛ր մեզ, Տե՛ր, ինչպես քույրիկն ասաց այսօր իր և ամուսնու մասին Չիկագոյի ճանապարհին: Առաջնորդի՛ր նրանց, Տեր Աստված, այնտեղ, ուր կկարողանաս օգտագործել նրանց, որպեսզի կարողանան լույսի շողեր լինել ուրիշներին, ովքեր խարխափում են խավարում, որ չեն ճանաչում մեր Տեր Հիսուսին: Մենք հիմա ծառայությունը հանձնում ենք Քեզ, և կլսենք Քո ուղղիչ Խոսքը, որպեսզի իմանանք, թե ինչպես պատրաստվենք այս փառավոր ժամի համար, Հիսուսի Անունով ենք մենք դա խնդրում: Ամեն:

[Չձայնագրված հատված ձայներիզի վրա: Եղբայր Նևիլը մեկնաբանություն է անում: Ծան. Խմբ.]:

Աստված օրհնի ձեզ։ Շնորհակալություն, եղբայր։

9 Ինձ համար սա մի փոքր անսպասելի էր։ Ես տանն էի, և այնպիսի տպավորություն ունեի, որ եթե շտապ ինչ-որ տեղ գնալու անհրաժեշտություն չլիներ, ես ինձ շատ վատ կզգայի մնալ տանը և չգալ աղոթաժողովի։ Եվ դա անսպասելի էր ինձ և նույնիսկ ընտանիքիս համար։ Նոր էի ներս մտել ու անմիջապես դուրս եկա։ Ես ասացի. «Ես գնում եմ աղոթքաժողովի»։ Մեդան նույնիսկ ժամանակ չուներ, որ պատրաստվեր գալու, ինքը չգիտեր, որ ես կգամ։

10 Այսպիսով ես ուրախ եմ լսելու քրոջ վկայությունը, եղբոր, այդ Լույսի մասին հարավային թե հյուսիսային Կարոլինայում՝ ինչ-որ տեղում։ Դա Գրինվիլում չէ՞ր։ [Քույրիկն ասում է. «Ոչ։ Սաութերն Փայնզում]։ Սաութերն Պայնզ։ Այո։

11 Եղբայր Լի Վեյլն այստեղ էր այսօր։ Ես այսօր մկրտեցի նրան այստեղ՝ մկրտական ծառայության ժամանակ։ Եղբայր Լի Վեյլը, գիտեք, այնտեղի ծառայողներից մեկն է, եղբայր Պարկեր Թոմասը։ Կար...

12 Հիշում եմ մի դեպքի մասին. քույրիկի վերևում ստվեր կար։ Դա մի մեծ հաստատում էր, քո՛ւյր, այն բանի, ինչ...Սուրբ Հոգին երբեմն մեզ թույլ կտա գնալ առաջ և կփորձի մեր հավատքը՝ տեսնելու համար, թե ինչ...նաև փորձում է մյուսների հավատքը։ Երբ դու ուղիղ նայում ես ինչ-որ բանի, և տեսնում ես ինչ-որ բան և ասում ես դա. մյուսները նայում են և չեն տեսնում դա, նրանք ասում են, որ դա չկա։ Հասկանո՞ւմ եք։ Բայց այն կա։

13 Հիմա, ոչ ոք չէր տեսնում այն Լույսը, որ կախված էր Պողոսի վրա, բայց Այն այնտեղ էր։ Ոչ ոք, Հովհաննեսից բացի, չտեսավ այն աղավնուն, որ իջավ երկնքից այդ Լույսի մեջ՝ կերպարանքով, և կախվեց Հիսուսի վրա։ Բայց Այն այնտեղ էր։ Հասկանո՞ւմ եք։

14 Այսպիսով, հետո, ավելի ուշ, երբ ես պատմում էի մարդկանց, որ այս Լույսը Կրակե Սյան նման էր, ոչ ոք չէր ուզում հավատալ դրան։ Բայց հիմա ֆոտոխցիկի մեխանիկական աչքը ֆիկսել է Դա։

Հիմա պարզվում է, որ չար ոգին սև գույնի է։

15 Ճիշտ այնպես, ինչպես մեր կյանքերն են, մենք ստվերներ ենք։ Եվ մենք...եթե մենք լույս լինեինք, մենք... եթե մեր կյանքերը համապատասխանեին օրվա Լույսին, Լույսի մեջ կքայլեինք։

16 Նման է այն բանին, որ ցերեկը դուրս նայես և ասեց. «Ես տեսնում եմ արևը»: Դու, դու տեսնում ես արևի շողքը: Դա արևի արտացոլանքն է: Դա արևը չէ, բայց այն ապացուցում է, որ արև կա: Դա ապացուցում է, որ կա արև:

17 Եվ հիմա, երբ ես տեսնում եմ, ասենք, թե ինչպես եք դուք այնտեղ նստած, հովհար անում, զրուցում, դա նշանակում է, որ դուք կենդանի եք, բայց դա միայն կյանքի շողքն է:

18 Որովհետև ցանկացած բան պետք է իր մեջ մթություն ունենա՝ ստվեր առաջացնելու համար: Հասկանո՞ւմ եք: Որովհետև ստվերը պետք է այնքանշատ խավար և այնքանշատ լույս ունենա, որ կարողանա ստվեր առաջացնի: Եվ այն չի կարող ամբողջությամբ մութ, և ամբողջությամբ լույս լինել: Եթե այն մութ է, ուրեմն շատ մութ է: Եթե լուսավոր է, ստվեր չկա, ոչինչ չկա ստվեր առաջացնելու համար: Բայց եթե այն լույսի և խավարի հետ միախառնված է, ստվեր է առաջացնում:

19 Ուստի մենք իսկապես լույսի ստվերներ ենք: Դուք հիմա ինչ-որ տեղից լույս եք արտացոլում: Եթե արտացոլում ես, և քրիստոնյա ես, սա, ստվեր լինելով, միայն ապացուցում է, որ Կյանք կա, որտեղ դու չես կարող մեռնել, որովհետև ա՛յս կյանքն է իր մեջ մահ պարունակում: Հասկանո՞ւմ եք: Բայց սա ստվեր է, որովհետև դուք տեսողական, շարժողական և խոսելու ունակություններով և մարմնի հինգ զգայարաններով օժտված կենդանի շարժվող էակ եք: Բայց և այնպես, դուք գիտեք, որ դրանք, դրանք մահանալու են: Եվ այնքան խնդիրներ կան: Դուք գիտեք, որ դա կարող է լինել միայն… Դա արտացոլանք է, հասկանում եք, որ կյանքը և մահը միախառնված են:

20 Ֆիզիկականը պետք է մեռնի: Բայց եթե դու քո մահկանացու կյանքով արտացոլում ես երկնային Լույսը, ուրեմն հավիտենական կյանքը՝ Աստծուն ես արտացոլում: Ուրեմն երբ դուք մահանաք, գնալու եք այդ Լույսի մեջ, որովհետև Դա է, հենց դա ես արտացոլել:

21 Իսկ եթե խավար աշխարհից ես, դու դա ես արտացոլում, և դու կարող ես անել, գնալ ոչ այլ վայր, քան խավարի մեջ: Հասկանո՞ւմ եք: Այսպիսով մենք արտացոլանքի մեջ ենք: Այսպիսով, մենք տեսնում ենք, որ նույնքան հաստատ, որքան Սուրբ Հոգին արտացոլում

է Լույսն ու Կյանքը, այնպես էլ մահն է արտացոլում խավարը։

22 Եվ նրանք երկուսն էլ այստեղ են։ Վաղ…Շաբաթվա վերջում՝ գուցե կիրակի օրը, մենք փոքրիկ նկարը կմեծացնենք, որ կարողանանք հայտարարությունների տախտակի վրա տեղադրել։

23 Որտեղ *ձեր* նկարն է կախված այնտեղ՝ հայտարարությունների տախտակի վրա։ Չգիտեմ, ուշադրությու�ն դարձրե՞լ եք դրան, թե՞ ոչ։ Հետո…

Մոտ մեկ շաթաբ առաջ Ջամայկայում, որտեղ ավետարանչություն էի անում…Մենք ձայներիզները ուղարկում ենք աշխարհով մեկ։ Եվ *Յոթը կնիքները* հասել են խորքերը…Ջամայկայի կղզու խորքերը, Այնտեղ՝ Կապույտ սարի հետևում շատ նախնադարյան է։ Եվ բնիկները երբեմն, մենք նրանց համար մագնիտոֆոն ենք տանում, որից դուք ունեք, հին Վիկտորոլայի նման, պետք է բռնակը պտտել, որ այդպես նվագի։ Հետո ամեն հինգ րեպեն մեկ ինչ–որ մեկը պետք է պտտի այն։

24 Այս խումբը ուներ մի փոքրիկ…մարտկոց, վեց վոլտանոց մարտկոց կամ դրա նման մի բան՝ մագնիտոֆոնն աշխատացնելու համար։ Եվ նրանք, նրանք բոլորը միասին նստած էին, մոտավորապես ինչքան որ այստեղ ենք այս երեկո, և լսում էին այդ *Կնիքները,* կարծեմ դա էր։ Եվ մինչ ես խոսում էի, նրանք նկատեցին, թե ինչպես սենյակ մտավ, հայտնվեց այդ նույն Կրակե Սյունը, անցավ այնտեղով, որտեղ մագտիտոֆոնն էր և հաստատվեց դրա վերևում։ Նրանք էլ գնացին վերցրեցին ֆոտոխցիկը և լուսանկարեցին Դրա նկարը։ Եվ հենց Նույնը այնտեղ է, կախված անմիջապես այնտեղ՝ դրա վերևում։ Մենք հիմա մեծացնում ենք այն, որպեսզի կարողանանք փակցնել այն հայտարարությունների տախտակին, որ դուք տեսնեք դա։

25 Մենք այնքա՜ն շնորհակալ ենք Աստծո շնորհի համար, որ բերվեց մեր…մեզ այս օրերում Նրա Ներկայության մեջ։ Մենք շատ բաների համար ենք շնորհակալ։

26 Հիմա մտածում եմ նայել այստեղ և տեսնել, թե կարո՞ղ եմ գտնել մի բան, մի քանի նշումներ կամ ինչ–որ մի բան, մեկ այլ բան, որի վերաբերյալ խոսել եմ։ Կամ, որը մեզ մի տեսակ…ամեն դեպքում ես մի թեմա դուրս գրել եմ այստեղ՝ գրքի հետևում։ Եթե կարողանամ գտնել մեկը,

գուցե Տերն ինձ ասելու ինչ-որ բան կտա որևէ մի բանի վերաբերյալ, մինչ մենք աղոթում ենք:

Հիմա, մենք անհամբեր սպասում ենք կիրակի օրվան:

27 Ես խոսում էի Պատգամներում: Կիրակի օրը ձեզ երկար պահեցի խոսելով՝ «Ինչո՞ւ ես Ինձ աղաղակում, խոսի՛ր ժողովրդի հետ և առաջ գնա» թեմայով:

28 Հիմա, կիրակի օրը բժշկության ծառայություն է լինելու, որտեղ աղոթքելու ենք հիվանդների համար: Հիմա, մոտենում ես հիվանդին, պետք է, որ ինչ-որ մի պատճառ լինի, որ հիվանդը, երբ մենք աղոթում ենք նրանց համար, եթե նրանք չեն բժշկվում, և ես ուզում եմ, եթե Տերը կամենա, կիրակի առավոտյան նույնպես մի կարճ քարոզ լինի...Այսպիսով, ես բժշկության ծառայություն կանցկացնեմ և կաղոթեմ բոլորի համար: Բիլլի Փոլը կամ նրանցից մեկը կիրակի առավոտյան ութի կողմերը, երբ բացվում է եկեղեցին, այստեղ կլինի, որ քարտերը բաժանի, երբ մարդիկ դռնից ներս են մտնում կամ երբ էլ որ ներս են գալիս:

29 Եվ ահա, հետո ես ուզում եմ փորձել, կարծում եմ Տերն ինչ-որ ձևով կտա ինձ պատկերացում պատճառների վերաբերյալ, թե ինչու որոշ մարդիկ չեն բժշկվում: Եվ ես, ես կարծում եմ, որ դա հասկացողության պակասն է: Եվ ես, ես հավատում եմ, գուցե կիրակի առավոտյան մենք կխոսենք այդ մասին, եթե Տերը կամենա:

30 Հիմա, չորեքշաբթի օրվա երեկոյան աղոթքաժողովը կարճ է լինելու, երբ կհավաքվենք ու կաղոթենք, ինչպես որ անում ենք, և կհաղորդակցվենք միասին:

31 Երբեմն ես, ես կարծում եմ, որ ամենակարևոր բաներից մեկը, որ ես տեսնում եմ այսօր, դա անկեղծության բացակայությունն է այն բանում, ինչին մենք հավատում ենք: Հասկանո՞ւմ եք: Ըմբռնո՞ւմ եք: Եթե Աստված Զոն Ուեսլեյի օրերում աներ այն, ինչ Նա արեց այսօր, դա ինչ կաներ. Մարտին Լյութերի օրերում, կամ էլ որևէ մեկի: Քանզի տեսնում ենք, որ Նրա արածն ապացուցված է թե՛ Եկեղեցով, թե՛ Հոգով, և թե՛ գիտությամբ, և ամեն մի շարժումով նրա, նրա, նրա սերմնակաթը պետք է ճանաչվի: Եվ Աստծո Խոսքը հայտարարում է Դա այստեղ և հայտնում է Այդ մասին, նախքան կատարվելը: Այնուհետև գալիս մարգարեանում է, և ցույց է տալիս այն, ինչ Նա ասել է, դա կատարելապես կատարվելու է, ճիշտ այն, ինչ Նա ասել

է: Մինչդեռ մենք մի տեսակ ծույլ նստում ենք, կարծես զարմանում. «Հետաքրքիր է, դա ինձ ի նկատի ունե՞ր: Հետաքրքիր է, գուցե դա պարզապես ամբողջ եկեղեցուն ի նկատի ունե՞ր: Կամ, կամ, հետաքրքիր է, արդյո՞ք ես իսպակես ներառված եմ Սրա մեջ»: Կարծում եմ կիրակի առավոտյան կփորձեմ խոսել այս սկզբունքներից մի քանիսի վերաբերյալ, որոնք մի քիչ կարող են լուսավորել մեզ:

32 Հիմա, այս երեկո իջնելուց առաջ ես մի բան հայտնաբերեցի, պարզապես բախվեցի դրան այստեղ: Մտածեցի. «Իսկ ի՞նչ եթե եղբայր Նևիլը, եթե ես գնամ այնտեղ, և նա ասի. «Բարձրացիր և խոսիր», և նստի»: Հասկանո՞ւմ եք: Մտածեցի. «Ավելի լավ է մի քանի սուրբգրային համարներ գրի առնեմ»: Որովհետև գիտեմ, նա, նա այնքան սիրալիր եղբայր է, և մենք, մենք գնահատում ենք նրան:

33 Խոսքի վրա աղոթելուց առաջ, ես ուզում եմ հավանություն տալ մի, մի եղբոր: Այս պահին անգամ չեմ կարողանում ասել նրա անունը, նրանց երկուսի անունները: Նրանք այստեղ են, իմ ընկերներն են: Դա... Նրանք ավետարանչական դաշտում սպասավորներ և ավետարանիչներ են, գնում են դուրս: Այս պատգամները ձայներիզով են լսել: Նրանք տարբեր հարանվանական եկեղեցիներից են դուրս եկել, երկու երիտասարդ տղաներ են: Եվ տղան, նրանցից մեկն այնքան հետաքրքրված է, որ թռել եկել է Թուսոն, հենց վերջերս՝ հավաքույթն ավարտվելու ժամանակ: Կարծեմ գործարար մարդկանց նախաճաշին եմ եղել: Եվ երիտասարդը՝ հրաշալի երիտասարդը, եկավ: Եվ նա...

34 Նրանք Կանզասից են: Այդ ամբողջ ճանապարհը նրանք կտրել եկել են իմ համար, որպեսզի ես ամուսնացնեմ նրանց: Ես դա շատ եմ գնահատում: Մտածել, որ մարդիկ այդ աստիճան հավատում են քո աղոթքներին, հավատում են, որ Աստված կլսի ու կպատասխանի. երիտասարդներն այսպես են սկսում իրենց ճանապարհը: Եվ երբ նրանք հասան այստեղ իմ համար, որ ամուսնացնեմ նրանց, երեկ պարզվեց, որ Ինդիանա նահանգի պետական օրենքը պահանջում է, որ նույնիսկ իրենց արյան անալիզներով պետք է երեք օր սպասեն այստեղ՝ նահանգում, մինչ կկարողանան ամուսնանալ: Այսպիսով մինչև ուրբաթ առավոտ նրանց ամուսնությունը չի կարող կայանալ:

35 Ես կխնդրեի մեր եղբորն այնտեղ՝ վերջում կանգնել և ասել, թե ով է ինքը, և իր սիրելի տիկինը, ինչպես նաև կողքի եղբայրը։

36 [Եղբայրն ասում է. «Շնորհակալություն, Բրանհամ եղբայր։ Առանձնաշնորհում է լինել այստեղ։ Ես Ռոջեր Օ Նեյլ եղբայրն եմ, ապրում եմ Կանզասում, ճամփորդում եմ ավետարանչական դաշտում որպես ավետարանիչ, պատմում եմ, որ «Հիսուսը փրկում, բժշկում է, Հիսուսին հավատալով...?...»։ Ես միշտ կրում եմ...?...Սա իմ հարսնացուն է՝ Պատրիսիա Բրաունը։ Ուրբաթ օրը մենք պատրաստվում ենք ամուսնանալ։ Սա իմ ավետարանիչ ու համագործակից եղբայր Ռոննի Հանթն է այնտեղ՝ վերջում։ Իսկ սա նրա հարսնացուն է՝ Քարոլը...?...Եվ մենք երջանիկ ենք այս երեկո գիտնվել այստեղ»։ Ծան. խմբ.]։

37 Շատ շնորհակալ եմ։ Մենք անշուշտ մաղթում ենք այս երիտասարդ դեսպաններին Աստծո օրհնությունները Տեր Հիսուսի գործի համար, որ զորացնի իրենց ճանապարհին։ Եվ ես հրճվում եմ, սպասելով Տիրոջ գալստյանը, և տեսնում եմ երիտասարդ տղամարդկանց և կանանց իրենց սրտում Քրիստոսին ծառայելու նպատակով, դա ինձ ոգևորում է, տեսնել, թե ինչպես են նրանք բարձրանում։ Թող Տերն առատորեն օրհնի ձեզ, եղբայրս, քույրս։

38 Այժմ անդրադառնանք այս փոքրիկ Գրքին, որից ես կյանքում երբեք չեմ խոսացել։ Այն շատ...Ընդամենը մեկ գլուխ է, Փիլիմոնի թուղթը։ Եվ այն...

39 Ես մի քիչ իռլանդացի եմ, և ես, և ես ներքևի ատամներիս շուրջն ունեմ մի լար, որպեսզի հետնամասում մի զույգ պահի։ Ես, ես երբեմն անունները ճիշտ չեմ արտասանում, այնինչ գիտեմ դրանց ճիշտ արտասանությունը։ Երբեմն էլ դրա պատճառն իմ կրթության պակասն է։ Եվ այսպես, «Փիլիմոն»,— ասաց ինչ-որ մեկն այնտեղ՝ խորքում,— որը կարծում եմ դրա ճիշտ արտասանությունն է։

40 Հիմա, առաջին համարը, ես ուզում եմ ընդամենը մեկ կամ երկու բառ վերցնել դրանից։

Պողոսը՝ Հիսուս Քրիստոսի բանտարկյալը...

41 Տիրոջ կամքով այս երեկո ես հենց սա եմ ուզում օգտագործել որպես թեմա՝ *«Բանտարկյալ»։*

42 Հիմա, դժվար է պատկերացնել, որ Պողոսն ինքն իրեն բանտարկյալ անվանի: Ազատ ծնված մարդը, Սուրբ Հոգով լցված, և այնուամենայնիվ իրեն «բանտարկյալ» է անվանում:

43 Եվ հիմա մենք տեսնում ենք, որ երբ նա դիմում է կորնթացիներին, ասում է՝ *«Պողոս՝ Հիսուս Քրիստոսի առաքյալ»:* Մեկ ուրիշ անգամ ասում է՝ *«Պողոս՝ Աստծո կամքով Հիսուս Քրիստոսի ծառա»*, երբ նա խոսում է Տիմոթեոսի և մյուսների հետ: Հիմա, երբ նա գրում է այստեղ Փիլիմոնին, ասում է՝ *«Պողոս՝ Հիսուս Քրիստոսի բանտարկյալ»: «Պողոսը՝ առաքյալ»,* ես կուզեի մի երեկո քարոզել այս թեմայով: *«Պողոսը՝ ծառա»,* սրա հիման վրա քարոզել: Իսկ հետո *«Պողոսը՝ բանտարկյալ»:*

44 Բայց այս երեկո, քանի որ ժամեր են պետք այս թեմաներից յուրաքանչյուրի մեջ խորանալու համար, ես ընտրում եմ այս թեման՝ *«Պողոսը՝ բանտարկյալ»*, իսկ թեման կլինի՝ *«Բանտարկյալ»:*

Այժմ մի պահ խոնարհենք մեր գլուխները:

45 Տե՛ր Հիսուս, ցանկացած մարդ, ով ֆիզիկապես ունակ է, կարող է թերթել Աստվածաշնչի այս էջերը, բայց միայն Սուրբ Հոգին կարող է այն մեկնաբանել այն լույսով, որ պետք է: Մենք խնդրում ենք Նրան, որ հիմա գա և օգնի մեզ հասկանալու, թե ինչին էր սա ուղղված, այս մեծ, հզոր մարգարեն՝ Պողոսը, մինչդեռ նա իրեն «բանտարկյալ» է անվանում: Թող Սուրբ Հոգին հայտնի սա մեզ, քանի որ մենք Նրան ենք սպասում Հիսուս Քրիստոսի Անունով: Ամեն:

46 Պատկերացնում եմ Պողոսին, երբ այս նամակը գրում էր Փիլիմոնին, թե ինչպես էր նստած բանտում, քաղաքի ստորերկյա զնդանում. բանտարկյալ: Իր վիճակից ելնելով նա լավ գիտեր, թե ինչ է նշանակում այդ բառը: Նա շրջապատված էր վանդակաճաղերով, և կարող էր ազատություն ստանալ միայն, եթե մեկն ազատեր նրան: Եվ նա գիտեր, թե ինչ էր նշանակում բանտարկյալ լինել: Եվ հետո, դարձյալ ես կարծում եմ, որ առաքյալը նկատի ուներ մի փոքր...ոչ թե դա ուղղակիորեն վերագրելով իր ներկա վիճակին, որպես բանտարկյալ ֆիզիկապես նստած այս, այս բանտում: Բայց ես հավատում եմ, որ նա ակնարկում էր, որ իր, իր էությունը, իր, իր, իր հոգին, կամքը Հիսուս Քրիստոսի բանտարկյալն է:

47 Հիմա, մենք բոլորս ծնված ենք ազատ կամքով՝

կատարելու ցանկացած որոշում, որը կամենում ենք: Աստված արդարացիորեն է անում դա, որովհետև պետք է բոլորին հավասար հիմքի վրա դնի, այլապես սխալ մարդուն դրել է...առաջին մարդուն դրել է սխալ հիմքի վրա, որը Նա դրեց բարոյական ազատ կամքի վրա: Տեսնո՞ւմ եք: Մենք այս երեկո Ադամի և Եվայի պես ենք: Ոչ մի տարբերություն: Ճիշտն ու սխալը դրված է մեզանից ցանկացածի առջև: Կյանքն ու մահը, մենք կարող ենք մեր ընտրությունը կատարել, այդ մենք պետք է անենք: Հասկանո՞ւմ եք:

48 Ադամն ու Եվան էլ պետք է ընտրեին, և, տեսնում եք, և, և նրանք սխալ ընտրություն կատարեցին: Այդ անելով՝ նրանք ողջ ցեղը՝ մարդկային ցեղը դրեցին մահվան տակ, մահվան պատժի տակ:

49 Հետո Աստված իջավ մարդու կերպարանքով, ընդունեց այդ մահը և վճառեց մահվան փրկագինը, որպեսզի...Նրա հպատակները, ովքեր ցանկանում են ազատվել, ազատ լինեն:

50 Հիմա, եթե Նա մեզ հետ այնպես չվարվեր, ինչպես Ադամի և Եվայի հետ, որ դուրս բերեր մեզ այնտեղից՝ ասելով. «Ուզեք, թե չուզեք, Ես ձեզ կփրկեմ», դրանով Նա Ադամին ու Եվային սխալ հիմքի վրա դրած կլիներ, հասկանում եք: Բայց այսօր մեզանից ամեն մեկը պետք է ընտրություն կատարի մահվան և կյանքի միջև: Մենք կարող ենք այդ անել:

51 Ինչպես արդեն ասել եմ, եթե ձեր լույսը ապացուցի, ձեր կյանքը ցույց կտա, թե դուք որ կողմում եք: Ինձ համար կարևոր չէ, թե դուք ինչ եք ասում: Ձեր ամեն օրվա գործերն ապացուցում են ձեր ով լինելը: Դուք լսել եք այս հին ասացվածքը. «Ձեր կյանքն այնքան բարձր է խոսում, որ ես չեմ կարող լսել ձեր վկայությունը»: Տեսնո՞ւմ եք: Ձեր, ձեր գործերն այնքան բարձր են խոսում:

52 Ես միշտ հավատացել եմ աղաղակելուն և ցատկելուն, բայց ես միշտ ասել եմ. «Ձեր ապրած կյանքից բարձր մի ցատկեք, որովհետև աշխարհը հետևում է դրան»: Հասկանո՞ւմ եք: Դուք պետք է այնքան բարձր ցատկեք, որքան բարձր է ձեր կյանքը, որովհետև ձեզ նայող կա: Եվ հիմա, երբ...

53 Մարդիկ չեն ուզում գալ եկեղեցի: Նրանք, նրանք, նրանցից շատերը պարզապես չեն ուզում այդ անել: Նրանցից ոմանք էլ, ովքեր չեն գալիս, անկեղծ մարդիկ են:

Նրանք այնքան ապականություն են տեսել եկեղեցում, որ չեն ուզում դրա հետ որևէ ընդհանուր բան ունենալ: Եվ շատ հաճախ խոսում ենք այդ մասին մեր մտքում, և գրեթե չես կարող մեղադրել նրանց, հականում եք, մարդկանց վարվելակեպի պատճառով: Նրանք իրենց քրիստոնյա են անվանում: Աշխարհի առջև դրված ամենամեծ գայթակղության քարը այն տղամարդիկ և կանայք են, ովքեր իրենց քրիստոնյա են դավանում, բայց իրենց դավանածից տարբերվող կյանքով են ապրում: Ճիշտ այդպես:

54 Հիմա, ահա թե ինչ հիասթափություններ կլինեն դատաստանի օրը. մեղավորը, ալկոհոլ վաճառողը, խաղամոլը, շնացողը, նա, նա չի հիասթափվի լսելով, թե ինչպես են կարդում իր դատավճիռը. «Հեռացե՛ք հավիտենական կրակի մեջ»: Նա չի հիասթափվի: Բայց այն մարդը, ով փորձում է իրեն թաքցնել եկեղեցական ինչ–որ դավանանքի հետևում, նա է դատաստանի օրը հուսախաբ լինելու: Հասկանո՞ւմ եք: Նա, ով դավանում է, թե քրիստոնյա է, բայց ուրիշ կյանքով է ապրում: Ավելի լավ կլիներ, որ երբեք հավատքի դավանություն արած չլիներ, քան սկսեր և ուրիշ կյանքով ապրեր: Որովհետև գայթակղության ամենամեծ քարը նա է, ով ասում է, որ ինքը, ինքը, ինքը քրիստոնյա է, բայց ուրիշ կյանքով է ապրում:

55 Միշտ, մի՛ դատեք ձեր կյանքը ըստ հրաշքեր գործելու զորության: Մենք էլ մեզ չենք դատում ըստ Խոսքի գիտության: Այլ միշտ դատեք ձեզ, հետ նայեք և գույքագրում արեք, թե ինչպիսի պտուղ է տալիս ձեր ներկայիս ապրած կյանքը: Հասկանո՞ւմ եք:

56 Ինչպես որոշ ժամանակ առաջ քարոզեցի Արիզոնայի Ֆենիքսում գործարարների հավաքույթի ժամանակ Հիսուսին արտացոլող քրիստոնեական կյանք մասին: Ասացի, որ ծնվել եմ այստեղ՝ Քենթուքիում, որտեղ հետամնածություն է, հատկապես երբ ես երեխա էի: Եվ այս փոքրիկ տղան երբեք չէր ունեցել այնպիսի տուն, ինչպիսին ունենք այստեղ, երբ այսքան գեղեցիկ կանայք տանն ամենուր նայում են հայելու մեջ որ ուղղեն սանրվացքը և այլն: Բայց նա մի փոքրիկ հայելի ուներ, ընդամենը մի փոքրիկ բեկոր դրսում ծառին ամրացված, որտեղ լվացարան կար, որտեղ որ նրա հայրն ու մայրն էին լվացվում ու սանրվում և այլն, ծառին ամրացված այդ փոքրիկ հին հայելու բեկորի մոտ:

57 Անկեղծ ասաց, ահա այսպիսի տուն ենք մենք ունեցել: Եթե երեխաներից մեկն ուզում էր նայել հայելու մեջ, պետք է արկղ բերեր, բարձրանար լվացարանի նստարանին և նայեր հայելու այդ բեկորի մեջ, որը ես էի գտել աղբանոցից: Դա Քենթուքիում չէր, այն այստեղ՝ Ինդիանայում, Յութիքա Փայքում:

58 Հիմա, այս փոքրիկ տղան երբեք ինքն իրեն հայելու մեջ չէր նայել: Մի օր նա քաղաք եկավ տատիկին տեսության: Եվ...Տատիկը մի տուն ուներ, որի դռան վրա ամբողջ երկարությամբ մի հայելի կար: Այսպիսով փոքրիկ տղան սենյակի միջով վազելով, տեսավ մեկ ուրիշ փոքրիկ տղայի իր առջև: Նա նույնպես վազում էր: Այսպիսով նա մտածեց, որ պետք է մի քանի րոպե կանգ առնի, որ տեսնի, թե այդ փոքրիկ տղան ինչ կանի: Եվ երբ նա կանգ առավ, փոքրիկ տղան էլ կանգ առավ: Երբ գլուխը շրջեց, փոքրիկ տղան էլ գլուխը շրջեց: Նա գլուխը քորեց, փոքրիկ տղան նույնպես գլուխը քորեց: Վերջապես մոտեցավ, որ ավելի մոտիկից ուսումնասիրի: Եվ նա շրջվեց: Մայրն ու տատիկը զարմացած իրեն էին նայում: Ասաց. «Մայրիկ, սա ես եմ»:

59 Դրա համար ասում եմ. «Մենք էլ ինչ-որ բան ենք արտացոլում»: Հասկանո՞ւմ եք: Մեր կյանքն արտացոլվում է:

60 Եթե մենք ապրեինք Նոյի ժամանակ, ո՞ւմ կողմում կլինեինք: Ո՞ւմ կողմից կլինեիք այդ փառավոր օրում, որում Նոյն էր ապրում: Ո՞ւմ կողմում կլինեիք Մովսեսի ժամանակ: Ո՞ր կողմում կլինեինք Եղիա մարգարեի ժամանակ, երբ ողջ աշխարհը կլանված էր մոդեռնիզմի ալիքով, ինչպես այս ժամանակակից Հեզաբելը Տիրոջ բոլոր ծառաներին տարել էր աշխարհիկ ճանապարհով: Եկեղեցի և քահանաները նույնպես խոնահվում էին նրա առջև: Դուք ժողովրդականությա՞ն կողմից կլինեիք, թե՞ կկանգնեիք Եղիայի հետ:

61 Ինչ վերաբերում է Տեր Հիսուսի ժամանակներին. Նա աշխարհի տեսանկյունից ժողովրդականություն չէր վայելում և կրթություն չուներ, նրանք չէին կարող գտնել որևէ մի դպրոց, որ Ինքը հաճախած լիներ, և ոչ մի, ոչ մի ճեմարանական փորձառություն: Եվ, և բացի այդ, մեծացել էր «ապօրինի ծնունդ» մականունով: Եվ ահա դուրս է գալիս, քարոզելով Ավետարանը, որը հակառակ էր ցանկացած բանի, ինչ նրանց սովորեցրել

էին: Ծատ…Եվ դատապարտում էր ծառայողներին ու իրենց կազմակերպությունները և այլն:

62 Եվ այդ կազմակերպությունները հայտարարություն արեցին. «Եթե որևէ մեկը գնա լսելու այս, ասպես կոչված, մարգարեին, նրան կվոնդեն ժողովարանից», ինչը մահացու մեղք էր: Նրանք պետք է գտնվեին ցուցակում: Միակ ձևը, որ նրանք կարող էին երկրպագություն անել, դա Գառան արյան ներքո էր: Նրանք պետք է գային այդ Զոհի մոտ: Իսկ, իսկ այն ժամանակ նրանք վտարանդիներ էին, և որքան մեծ բան էր դա:

63 Բայց այս մարդիկ արհամարեցին դա, թեև Նա կատարելապես համապատասխանում էր Սուրբ Գրքին, բայց ոչ իրենց գիտության համաձայն: Ո՞ր կողմում դուք կլինեիք: Հասկանո՞ւմ եք: Հիմա, մի՛…Ձեր ներկայիս կյանքը ճշգրտորեն արտացոլում է, թե ինչ կանեիք այն ժամանակ, որովհետև դեռևս նույն հոգով եք բռնված: Հասկանո՞ւմ եք: Եթե հիմա դուք դա անում եք, նույնը կանեիք այն ժամանակ, որովհետև այդ նույն ոգին, որ հիմա ձեր մեջ է, այն ժամանակվա մարդկանց մեջ է եղել:

64 Սատանան երբեք իր ոգին չի վերցնում, նա պարզապես փոխանցում է դա մեկից մյուսին:

65 Ամտված էլ երբեք չի վերցնում Իր հոգին, այն փոխանցվում է մեկից մյուսին: Հասկանո՞ւմ եք:

66 Ուստի նույն Հոգին, որ Եղիայի վրա էր, իջավ Եղիսեյի վրա, հետո նույն Հոգին իջավ Հովհաննես Մկրտչի վրա և այսպես շարունակ:

67 Սուրբ Հոգին, որ Քրիստոսի վրա էր, իջավ աշակերտների վրա, ու այսպես շարունակ, և դեռևս մարդկանց վրա է: Հասկանո՞ւմ եք: Ատված երբեք Իր Հոգին չի վերցնում:

Մեզ մնում է ընտրություն կատարել:

68 Ես, ես այստեղ չեմ տեսնում, որ Պողոսը որևէ բանի համար ափսոսար կամ տրտնջար, որ ինքը բանտարկյալ է: Բայց նա ինքն իրեն կոչում էր…Ես հավատում եմ, որ երբ Պողոսն այդ գրիչով գրում էր այս թուղթը, Սուրբ Հոգին էր, որ նրան մղեց գրելու այդպես: Գուցե դրա համար է, որ այս երեկո մենք կարողանանք մեր թեմայի ենթատեքստը հանենք՝ ցույց տալու համար, թե ինչու Պողոսն արեց դա: Որովհետև դա սուրբգրային է, իսկ սուրբգրայինը հավիտենական է: Ես կարծում եմ, որ այս մռայլ հին բանտում նստած, Պողոսն այստեղ գրում է իր գործակցին՝

իր եղբոյրը, որ ինքը «Քրիստոսի բանտարկյալն է»: Ուստի նա կարող էր արտահայտել դա, նայելով իր շուրջը: Հիմա, նա բանտում էր, բայց այդ մասին չէ, որ գրում էր Քրիստոսի այս, այս սպասավորին, ով ծառայում էր իր հետ միասին: Նա ուզում էր ասել, որ ինքը Հիսուս Քրիստոսի Խոսքի բանտակյալն է, որովհետև Քրիստոսը Խոսքն է:

69 Պողոսն իր ժամանակվա մեծ գիտնականներից էր: Նա մեծ ձգտումներ ուներ: Նա, նա մարդկանցից էր կրթություն ստացել, Գամաղիել անունով մարդու կողմից, ով իր օրերի մեծ ուսուցիչ էր, ամենամեծ դպրոցներից մեկն էր, որն ինքը կարող էր հաճախել: Օրինակ ինչպես մենք ենք ասում՝ Ուիթոն քոլեջը կամ Բոբ Ջոնսի համալսարանը, կամ հիմնարար դպրոցներից մեկը: Նա կրթվել էր որպես, որպես, որպես Խոսքի սպասավոր: Եվ ինքը լավ դաստիարակված, խելացի, ինտելեկտուալ մարդ էր, գուցե մեծ ձգտում ուներ երբևէ իր ժողովրդի քահանա կամ քահանայապետ դառնալու:

70 Նա հավակնություններ ուներ: Եվ հետո պարզել, որ այս հավակնությունները, որոնց համար ինքը կրթություն էր ստացել և իր ողջ կյանքն էր նվիրել, գուցե ութ–տասը տարեկանից մինչև երեսուն-երեսունհինգ տարեկանը, երբ ավարտեց ուսումը և աստիճան ստացավ, և ստացավ իր բոլոր դիպլոմները և այլն, և լավ հարաբերությունների մեջ էր ողջ քահանայության հետ, նույնիսկ Երուսաղեմի քահանայապետի: Պողոսը նրանից հանձնարարություն էր ստացել, գրավոր կարգադրություն, որով իրեն էր վստահված այդ գործը՝ գնալ Դամասկոս, հայտնաբերել նրանց, ովքեր Աստծուն պաշտում են քահանայապետի կարգադրության հակառակ, կապել նրանց և նետել բանտ: Անհրաժեշտության դեպքում հրաման ուներ սպանելու նրանց, եթե ուզենար: Նա...Նա մեծ հավակնություններ ուներ:

71 Եվ հիմա, այն ամենը, ինչ նա սովորել էր, Աստված վերցրեց իրենից: Հասկանո՞ւմ եք: Իր նպատակը, իր համար ծախսված հոր փողերը, հոր և մոր հավակնությունները, ամեն բան վերցվեց իրենից, որովհետև Աստված ուրիշ ծրագիր ուներ: Մի ժամանակ նա իր կյանքի նպատակի բանտարկյալն էր, իսկ հիմա դարձել էր բանտարկյալը Հիսուս Քրիստոսի, Որը Խոսքն էր:

72 Դամասկոսի ճանապարհը փոխեց Պողոսին: Նա

գնալիս, գուցե ժամը տասնմեկի կողմերը ընկավ գետնին ու մի Ձայն լսեց, որն ասում էր. *«Սավո՛ւղ, ինչո՞ւ ես հալածում Ինձ»:* Նա նայեց վեր: Նա նայեց և լինելով հրեա՝ հասկացավ, որ այդ Կրակե Սյունը Տերն էր, որ առաջնորդում էր Իսրայելի որդիներին, որովհետև ինքը գիտեր, թե ինչ լույս էր դա:

73 Հիշե՛ք. այս հրեան երբեք որևէ մեկին «Տեր» չէր անվանի, մեծատառով Տ–ե–ր՝ Էլոհիմ, եթե համոզված չլիներ, որ այդ Նա է, որովհետև ինքը կրթված գիտնական էր: Եվ երբ աչքերը բարձրացրեց և տեսավ Դա՝ Լույսը, Կրակի Սյունը, որն առաջնորդել էր իր ժողովրդին անապատի միջով, ասաց. «Տե՛ր», Էլոհիմ, մեծառատ Տ–ե...*«Ո՞վ ես Դու, Տե՛ր»:*

74 Ինչ անակնկալ պետք է, որ լիներ այս աստվածաբանի համար՝ ասաց. *«Ես Հիսուսն եմ»,* հենց Նա, ում նա այնքան դեմ էր: Ինչպիսի՜, ինչպիսի՜ շրջադարձ: Ո՛հ, ո՛հ: Ինչ ահավոր պետք է լիներ փառասիրական հավակնություններով այս մարդու համար հանկարծ բացահայտել, որ ինքը հալածող է: Նրա ձգտումներն իրեն ավելի էին հեռացրել ամենագլխավորից, քան ինքը կարծում էր: Ինչպիսի՜ ցնցում պետք է որ եղած լիներ այս առաքյալի համար, երբ Տերն ասաց. *«Ես Հիսուսն եմ»,* հենց Նա, ում ինքը հալածում էր: *«Ինչո՞ւ ես Ինձ հալածում»:*

75 Եվս մի փոքրիկ մեջբերում կարող էինք մտցնել այստեղ: Տեսնում եք, երբ նրանք ծաղրում են Եկեղեցուն, իրականում նրան չեն ծաղրում, այլ Հիսուսին են ծաղրում: *«Ինչո՞ւ ես հալածում Ինձ»:* Ինչպե՞ս կարող էր Պողոսն այդ ժամանակ իր ողջ խելացիությամբ հավատալ, որ Դա...որ այդ Խումբը, որին ինքը հալածում էր հենց այն Աստվածն էր, որին նա պնդում էր, թե ծառայում է: Կարծում եմ, որ կարիք չկա մանրամասների մեջ մտնելու, կարծում եմ, որ բոլորս բավարար չափով տեղեկացված ենք, որ հասկանանք, թե ինչ եմ ուզում ասել: Նույն բանն էլ կատարվում է այսօր:

76 Պողոսը տգիտության պատճառով, թեև ինտելեկտուալ և խելացի էր, ավելի խելացի, քան այդ անկիրթ գալիլիացիները, որոնց ինքը հալածում էր, ովքեր իրենց խոնարհությամբ արդեն ընդունել էին այդ Մարդուն որպես Տեր: Բայց Պողոսը իր կրթությամբ ու խելքով չէր կարողացել Դա ընդունել: Ինչպիսի՜ շրջադարձ պետք է դա լիներ նրա համար այդ ճանապարհի վրա:

Նա կուրությամբ զարկվեց, այնպես, որ չէր կարող շարունակել իր միսիան, բայց տարվեց մի տուն Ուղիղ կոչվող փողոցի վրա, որը...

77 Հետո Անանիա անունով մի մարգարե գնաց այնտեղ, ով տեսել էր տեսիլքի մեջ, նրա գալը, տեսել էր թե նա որտեղ է գտնվում, գնաց այնտեղ, որտեղ ինքն էր և մտավ ներս: Եվ ասաց. «Սավո՛ւղ եղբայր, Տերը, որ քեզ ճանապարհին հայտնվեց, ինձ ուղարկեց, որ ես կարողանամ ձեռքերս քեզ վրա դնել, որպեսզի տեսողությունդ վերստանաս ու Սուրբ Հոգով լցվես»:

78 Տեսնում եք, թե նա որտեղ էր: Ինչպիսի՜, ինչպիսի՜ իրադարձություն պետք է, որ դա եղած լիներ Պողոսի համար: Հասկանո՞ւմ եք: Այն, ինչ ինքը սովորել էր անել լիովին հակառակ էր: Իր ողջ կրթվածությունը, դա, դա ուղղակի զրոյի հավարսարեց իր համար:

79 Այժմ նա գիտեր, որ ինքը փորձառություն է ունեցել: Ահա մեկ այլ լավ դաս մեզ համար, որ միայն փորձառությունը բավական չէ: Դա պետք է Տիրոջ Խոսքի համաձայն փորձառություն լինի: Այդպես, տեսնելով դա և իմանալով, որ դա փառավոր Բան է, որն իրենից առաջ ընդունողներ արդեն եղել են, երեք տարի, վեց ամսով գնաց Արաբիայի անապատ, տանելով իր հետ այն ժամանակ եղած Աստվածաշունչը՝ Հին Կտակարանը, և իր փորձառությունը համեմատեց Սուրբ Գրքի հետ՝ տեսնելու համար, թե արդյոք Դա համապատասխանում է Գրվածքներին:

80 Հիմա, ի՞նչ կլիներ, եթե նա ասեր. «Դե, ես կարծում եմ, որ դա մի քիչ զգացմունքային վիճակ էր» և գնար առաջ: «Ես, ես կհետևեմ իմ բանականությանը»:

81 Հիմա, նա պետք է ինչ–որ բանի բանտարկյալ դառնար: Համեմատելուց հետո, և տեսնելով, զարմանալի չէ, որ նա կարողացավ գրել Եբրայեցիս թուղթը խորհրդապատկերներով: Տեսնո՞ւմ եք: Երեքուկես տարվա ընթացքում, երբ նա խորասուզված էր Խոսքի մեջ, հայտնաբերեց, որ իրեն կանչող Աստվածը իրեն հետ էր բերում և փոխում էր իր ողջ հասկացողությունը, այն ամենը, ինչ ինքը մտածել էր, սովորել էր, իր բոլոր ձգտումները հեռացվեցին, և նա դարձավ բանտարկյալ: Աստծո սերն այնքան զարմանահրաշ էր և այնպիսի՜ հայտնություն էր, որ նա չէր կարող հեռանալ դրանից:

82 Դա է ճշմարիտ փորձառությունը, որն ունենում է

Աստծուն հանդիպած ամեն ճշմարիտ հավատացյալ: Դուք, դուք հաղորդակցության մեջ եք մտնում այնպիսի փառավոր մի Բանի հետ, որ դուք…դուք, դուք դառնում եք բանտարկյալ՝ մնացած ամեն բանից հեռու: Հասկանո՞ւմ եք: Դուք, դուք ամեն բան թողնում եք, որ բանտարկվեք դրա մեջ:

83 Հիսուսն այդ մասին մի անգամ ասաց. «Երկնքի թագավորությունը նման է մի մարդու, որը մարգարիտներ էր գնում: Երբ նա գտնում է այդ փառավոր Մարգարիտը, իր ողջ ունեցվածքը վաճառում է, որ ձեռք բերի այն»:

84 Հենց դա է կատարվում այստեղ: Դուք, դուք ունեք ինտելեկտուալ մտքեր, աստվածաբանական փորձառություն, բայց երբ գալիս է ժամանակը, երբ դուք, դուք, դուք գտնում եք այդ Իսկականը, դուք, դուք ամեն բան վաճառում եք, և փակվում եք դրա մեջ:

85 Պողոսը գիտեր, թե դա ինչ էր: Նա, նա հայտնաբերեց, որ ինքը լծված է ինչ-որ Բանի: Ինչպես ձին է լծվում ինչ-որ բան քաշելու համար: Եվ Պողոսը գիտեր, այս փորձառությունից և երեքուկես տարի աստվածաշնչյան խորհրդապատկերների հետ համեմատելուց հետո հասկացավ, որ Աստված իրեն ընտրել է և լծել Սուրբ Հոգով, որպեսզի նա իր փորձառության միջոցով տանի Ավետարանը հեթանոսների առջև: Հոգին Ինքն էր նրան լծել:

86 Եվ այսօր որպես Քրիստոսի սպասավորներ մենք լծված ենք, կապված ենք: Մենք չենք կարող որևէ տեղ գնալ: Մենք մուտք ենք գործել Դրանով, լծված ենք Խոսքին: Կարևոր չէ, թե ինչ կասեն, դուք լծված եք: Խոսքի մեջ այնպիսի բան կա, որը ձեզ թույլ չի տալիս հեռանալ: Դուք Խոսքի հետ լծակից եք Սուրբ Հոգու միջոցով: Նա ձեզ լծել է Խոսքի հետ: Կարևոր չէ, թե որևէ մեկն ինչ է ասում, դա Խոսքն է, միշտ: Դուք Խոսքի հետ լծակից եք Սուրբ Հոգու միջոցով, Պողոսը լծված էր:

87 Նա սովորել էր Արաբիայի անապատի խորքում, երբ նրա բոլոր նախկին բաներն ու փորձառությունները, և ձգտումները, դա, այդ բաները վերցվեց նրանից:

88 Մեզանից էլ առաջին հերթին պետք է այդ ամենը վերցվի: Բայց մարդիկ չեն սիրում, որ իրենցից վերցնում են: Մեթոդական եղբայրն ուզում է իր մեթոդական ուսմունքից որոշ բաներ պահել: Ըհը: Մկրտական

եղբայրն ուզում է իր մկրտական ուսմունքից որոշ բաներ պահել: Հասկանո՞ւմ եք: Բայց դուք պետք է այդ ամենը թողնեք և վերստին ծնվեք: Եվ այստեղից էլ սկսեք, թույլ տաք, որ Սուրբ Հոգին ձեզ առաջնորդի: Դուք չեք կարող ասել. «Դե, հիմա, իմ, իմ հայրիկն ասում էր, որ երբ ներս էր մտնում, եկեղեցի էր մտնում, նա սեղմում էր հովվի ձեռքը: Նա, նա եկեղեցու հավատարիմ անդամ էր»: Գուցե դա լավ էր իր սերնդի ժամանակ, բայց մենք ուրիշ սերնդում ենք ապրում: Հասկանո՞ւմ եք; Մենք հիմա պետք է վերադառնանք աստվածաշնչյան ժամանակներին այս օրվա համար:

89 Քահանաները նույնպես լծված էին: Բայց, տեսեք, նրանք մտան ուրիշ ժամանակաշրջան, և նրանք, նրանք չհանեցին իրենց հին լուծը և նորը չհագան:

90 Նույն բանը մենք տեսնում ենք այսօր: Մենք անցել ենք հարանվանական ժամանակաշրջանի միջով, ինչպես դա ապացուցեցինք եկեղեցու շրջանների, Աստվածաշնչի միջոցով և այլն, բայց հիմա մենք մտել ենք ազատության ժամանակաշրջան, երբ Սուրբ Հոգին Ինքն է իջնում, հաստատում, ճանաչեցնում Իրեն և իրականացնում է Իր տված յուրաքանչյուր խոստումը: Ո՜հ, Աստված իմ: Ինչպիսի՜ փառավոր ժամանակաշրջան:

91 Եվ Պողոսը գիտեր, ևս մի բան, նա գիտեր, որ ինքը չի կարող որևէ տեղ գնալ, որ լվծած լինելով Խոսքին, նա չէր...որ նա, բայց ցանկանում էր գնալ: Նա գիտեր, որ իր ձգտումը մղում էր նրան եղբայրների մոտ, որտեղ ինքը հրավիրված էր գնալ, բայց Հոգին նրան մղեց ուրիշ բան անել: Նա այլևս իր անձի տերը չէր:

92 Գուցե նրան ասում էին. «Սավո՛ւղ եղբայր, Պողո՛ս եղբայր, մենք ուզում ենք, որ դուք գաք մեզ մոտ, որովհետև մեր եկեղեցին ամենամեծն է: Ամենաշատ անդամներ մեր եկեղեցին ունի: Դուք շատ ընծաներ կստանաք և այլն»:

93 Բայց Հոգով մղված նա մտածում էր. «Այնտեղ մի եղբայր ունեմ: Ես կուզենայի այնտեղ գնալ և փրկել այդ եղբորը, բերել նրան Տիրոջը»: Բայց Հոգին նրան մղում էր ուրիշ տեղ գնալ: Նա բանտարկյալ էր: Ճիշտ է:

94 Ո՛վ Աստված, մեզ այդպիսի բանտարկյալներ դարձրու, որ ազատվենք մեր եսասիրական ձգտումներից, անձնական դատողություններից, մեր գաղափարներից, որոնք մեր կարծիքով լավագույնն են, Հիսուս Քրիստոսի

բանտարկյալը դառնալու համար։ Ես կարծում եմ, որ դա բարձրաձայն հայտարարություն էր, որ՝ «Ես Հիսուս Քրիստոսի բանտարկյալն եմ»։

95 Եվ հիշեք, որ Նա Խոսքն է։ Հասկանո՞ւմ եք։ Կարևոր չէ, թե որևէ մեկն ինչ է մտածում, կարևորը Խոսքն է։ Հասկանո՞ւմ եք։ Եթե դուք Խոսքի բանտարկյալն եք, ոչ մի հարանվանություն չի կարող ձեզ շեղել։ Կարևորը, կարևորը Խոսքն է։ Դուք պարզապես...Դուք Խոսքի բանտարկյալն եք, և վերջ։ Դուք պետք է գործեք այնպես, ինչպես Խոսքն է պատվիրում։

96 Հիմա, Պողոսը չէր կարող գնալ իր ուզած տեղերը, (ինչո՞ւ) որովհետև Հոգին նրան արգելում էր։ Հիշում եք, շատ անգամներ Պողոսը փորձում էր ինչ-որ տեղ գնալ և մտածում էր. «Այնտեղ ես կկարողանայի մեծ հավաքույթ անցկացնել», բայց Հոգին արգելում էր նրան։ Հիմա, մի՞թե դա հստակ ցույց չի տալիս և չի ապացուցում, որ Պողոսը բանտարկյալ էր։ Հիսուս Քրիստոսի բանտարկյալ՝ Հոգու միջոցով լծված Իր Խոսքին։ Ո՛հ, ես սիրում եմ դա։ Ըհը։

97 Նա կապված էր։ Նա կապված էր սիրո շղթաներով, կապերով, որ կատարեր Աստծո կամքը, միայն Աստծո կամքը։ Նա բանտարկյալ էր։ Կապված էր սիրո շղթաներով։ Նա Քրիստոսի հետ լծակից էր։ Նա չէր կարող ուրիշ լծի տակ գտնվել։ Նա լծակից էր Քրիստոսի հետ։ Եվ որտեղ Առաջնորդն էր գնում, այնտեղ էլ նա պետք է գնար։ Կապ չունի, որ *այս* կամ *այն* կողմում խոտն ավելի կանաչ էր, նա պետք է գնար այնտեղ, ուր գնում էին Կառապանն ու լուծը։

98 Ո՛հ, եթե այս երեկո մենք որպես Բրանհամի խորան միայն կարողանայինք բանտարկյալներ դառնալ, թողնել մեր եսասեր բնությունը, անձնական ձգտումները, լիովին հանձնվել և լինել Նրա լծի տակ։ Կարևոր չէ, թե աշխարհն ինչ է մտածում, ինչ է անում, մենք կապված ենք սիրո լծի տակ, մենք բանտարկյալներ ենք։ «Իմ ոտքերը այնպես են կապված Քրիստոսի լծին, որ այլևս չեն պարելու։ Իմ աչքերը այնպես են կապված Քրիստոսի լծին, որ փողոցում տեսնելով այդ ժամանակակից ստրիպտիզը, հայացքս շրջում եմ։ Իմ, իմ սիրտը այնպես է կապված Նրա լծին, որ այլևս չեմ կարող աշխարհը սիրել։ Իմ կամքն այնպես է կապված Նրա լծին, որ այլևս չգիտեմ, թե որոնք են իմ ձգտումները։ Պարզապես «Ուր որ ինձ տանես, ես կհետևեմ, Տե՛ր»։ Ես ուզում եմ լինել բանտարկյալ»։ Հասկանո՞ւմ եք։

99 Պողոսն իրոք բանտարկյալ էր։ Նա չէր սխալվում, որ այդպես էր ասում։ Սուրբ Հոգին սովորեցրել էր նրան, նորից, սպասել Խոսքին։ Հիմա, նա սովորել էր մի ձևով, բայց, բայց հիմա Աստված նրան մեկ ուրիշ կերպ էր սովորեցնում։ Սուրբ Հոգին նրան սովորեցրել էլ Տիրոջը սպասել, անկախ նրանից, թե ինչպիսին էին նրա ձգտումները։

100 Այժմ Սուրբ Հոգու օգնությամբ ես ձեզ ինչ-որ բան ցույց կտամ։ Հասկանո՞ւմ եք։ Եկե՛ք հիմա մի օրինակ վերցնենք։

101 Մի օր Պողոսը և Շիղան գնում էին մի քաղաքի փողոցով, որտեղ նրանք արթնություն էին անցկացրել։ Դևերով բռնված մի փոքրիկ աղջիկ Պողոսի ետևից ընկած՝ աղաղակում էր։ Անկասկած Պողոսը գիտեր, որ ինքը որպես առաքյալ, իշխանություն ուներ այդ չար ոգուն դուրս հանել այդ կնոջ միջից։ Բայց դուք ուշադրություն դարձրեցի՞ք։ Նա օրօրի սպասեց, մինչև որ հանկարծ Սուրբ Հոգին իր հետ խոսեց, ասաց. «Սա՛ է ժամը»։

102 Այդ ժամանակ նա ասաց. «Դո՛ւ՝ հոգի, դո՛ւրս եկ նրա միջից»։ Տեսնո՞ւմ եք։ Նա գիտեր, սպասել Տիրոջը։

103 Ահա թե որտեղ են այսքան շատ մարդիկ այսօր նախատինք բերում Խոսքի վրա։ Նրանք դուրս են գալիս հավակնություններով։ Ի՞նչ՝ արթնություններ են անարդյունք մնացել այդպիսի բաների պատճառով, որովհետև ավետարանիչը չի սպասում, որ տեսնի, թե Տերն ինչ պետք է ասի։ Նրանցից ոմանք ասում են. «Արի», և նրանք, նրանք անմիջապես գնում են, որովհետև միությունն է ասել՝ գնա։ Իսկ Սուրբ Հոգին ուրիշ բան է ասում։ Բայց մարդու ձգտումը դառնալ շրջանի քահանա կամ մեկ այլ բան, կամ երեց, եպիսկոպոս կամ մեկ այլ բան նրան կմղի. «Դու պետք է գնաս»։ Մինչդեռ նա գիտի, որ այդպես չի կարելի։ Սուրբ Հոգին ասում է. «Գնա՛ *այնտեղ*»։ Հասկանո՞ւմ եք։ Նա կապված է իր կազմակերպության լծին։ Նա իր կազմակերպության բանտարկյալն է։

104 Բայց եթե Քրիստոսի լծին կապված լիներ, կառաջնորդվեր Սուրբ Հոգով։ Նա...?...Հասկանո՞ւմ եք։ Նա, նա լծի տակ է, բանտարկյալ է։ Նրա համար կարևոր չէ, թե ուրիշներն ինչ են ասում. այլապես դա, դա, դա կլինի ձայն հանող պղինձ կամ ղողանջող ծնծղա։ Նա միայն Աստծո Ձայնն է լսում, և խոսում է, երբ Աստծո ձայնն է խոսում։ Ինքը ոչինչ չի ասում։

105 Ասում են. «Ո՛հ, ո՛հ, եղբայր Ջոնս»։ Կամ եղբայր Ռոբերթս, կամ մեր երկրում ապրող այդ մեծ մարդիկ, ինչպիսիք են Թոմմի Հիքսը, կամ, կամ, կամ Օրալ Ռոբերթսը, կամ կամ Թոմմի Օսբորնն եղբայրը, այդ մեծ ավետարանիչներից ոմանք։ Գուցե մեկն ասի. «Ե՛կ մեզ մոտ, Թոմմի։ Դուք Աստծո մեծ մարդ եք»։ (Կամ Օրալը)։ «Ես, ես անկողնուն գամված հորեղբայր ունեմ, ով, ով պառկած է այնտեղ։ Եվ նա, նա հիվանդ է։ Ուզում եմ, որ դուք գաք։ Ես հավատում եմ, որ դուք զորություն ունեք նրան բժկելու»։ Հասկանո՞ւմ եք։

Գուցե Սուրբ Հոգին նրան ասի. «Ոչ հիմա»։

106 Բայց այդ մարդու հետ ունեցած բարեկամությունը նրան պարտավորեցնում է գնալ։ Եթե չգնա, այդ մարդու թշնամին կդառնա։ Այդ մարդը կասի. «Նա գնացել է *այսինչի* տուն, *այնինչի* տուն և բժշկել է այդ երեխային կամ այդ տղային։ Ես դա գիտեմ։ Իսկ ես, որ իր այսքան տարվա ընկերն եմ, տեսնում եք, չեկավ»։

107 Բայց եթե Սուրբ Հոգին արգելում է գնալ, ավելի լավ է, որ չգնա, եթե նա Աստծո լծի տակ է։ Նրա իր ընկերոջը սիրում է։ Բայց ավելի լավ է, որ Սուրբ Հոգով առաջնորդվի, որովհետև դա ամեն դեպքում ոչ մի լավ բան չի տա։ Ես շատ անգամներ եմ դա զգացել։

108 Բայց Պողոսը սպասում էր, որ Հոգին իրեն ասի, թե ինչ անի։ «Սպասել Հոգուց»,— ասաց։ Մի երեկո քարոզից հետո, դուրս գալիս տեսավ մի անդամալուծի։ Մեկ էլ հանկարծ Հոգին խոսեց նրա հետ, և նա ասաց. «Ես տեսնում եմ...»։ Ինչպե՞ս։ Այնպես, ինչպես տեսել էր, որ նավաբեկության են ենթարկվելու և ընկնելու են մի կղզի։ Հասկանո՞ւմ եք։ «Ես տեսնում եմ, որ դու բժշկվելու հավատ ունես։ Կանգնի՛ր քո ոտքերի վրա ուղիղ։ Հիսուս Քրիստոսը քեզ բժշկել է»։ Տեսնո՞ւմ եք։ Ահա խնդրեմ։ Նա, նա, նա լծի տակ էր։ Գուցե նա մի շաբաթ ավետարանչություն էր արել և ոչինչ չէր կատարվել, բայց նա սպասում էր, որ Սուրբ Հոգին խոսի իր հետ։ Հասկանո՞մ եք։ Նա կապված էր այդ կանչի լծին։

109 Հիմա դուք կասեք. «Բրանհամ եղբայր, դուք հակասում եք կիրակի օրվա ձեր ասածին ձեր երկար սպասելու վերաբերյալ»։

110 Եվ, բայց հիշե՛ք, որ Սուրբ Հոգին խոսեց ինձ հետ ճանապարհին և ասաց. «Ես քեզ նորից ուղարկում եմ հիվանդների և տկարների մոտ»։ Հասկանո՞ւմ եք։

Ես հնազանդվեցի Սուրբ Հոգուն: Դա հաստատ է: Ես չգնացի, մինչև որ Նա ասաց ինձ անել դա: Ես սպասում էի ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ խոսքին, մինչև ստացա ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ խոսքը: Հիմա, դա ուրիշ բան է: Հասկանո՞ւմ եք: Հիմա, դա, սա է տարբերությունը: Այո:

111 Պողոսը սպասում էր Տիրոջ Խոսքին: Հոգին նրան մղում էր հետևելու միայն Տիրոջ կարգադրություններին, այնժամ նա դարձավ Հիսուս Քրիստոսի բանտարկյալը: Բարեկամնե՛ր, եթե մենք միայն կարողանայինք բանտարկյալներ դառնալ:

112 Գիտեմ, որ շոգ է: Բայց ես, ես կուզեի ևս մի քանի կերպարների մասին խոսել, եթե դեմ չեք: Ես այստեղ նշել եմ վեց-ութ հոգու, բայց ես, ես կուզենայի մեկ կամ երկու կերպարների հիշատակել:

113 Վերցնենք Մովսեսի կերպարը: Նա ազատարար էր ծնվել: Եվ նա, նա, նա գիտեր, որ ծնվել էր ազատարար դառնալու համար:

114 Բայց մինչև Մովսեսի մասին խոսելը կուզեի անել այս հայտարարությունը՝ որ Աստված միշտ ցանկացած մարդու, որը իսկապես կծառայի Իրեն, Իր գերին է դարձնում: Աստծուն ծառայելու համար մարդը պետք է թողնի իր բոլոր ձգտումները, այն, ինչ է, ամեն, ամեն բան, իր կյանքը, հոգին, մարմինը, կամքը, ձգտումները և այլն, ու լիովին դառնա Քրիստոսի բանտարկյալը, Ով Խոսքն է:

115 Հնարավոր է, որ անհրաժեշտ լինի հակառակ գնալ ձեր բանականությանը: Գուցե մտածում եք, որ որևէ կազմակերպությունում ձեզ կբարձրացնեին և կվստահեին ինչ-որ կարևոր բան, որով հնարավորություն կունենայիք փայլելու: Բայց որտե՞ղ կհատնվեիք դրանից հետո: Որոշ ժամանակ անց կտեսնեք, որ պարտություն եք կրել, մինչև Աստված գտնի մարդու, ով հոժարակամ կդառնա Իր բանտարկյալը:

116 Աստված բանտարկյալներ է փնտրում: Միշտ է փնտրել: Կարող եք քննել դա Սուրբ Գրքով: Մարդը պետք է Քրիստոսի բանտարկյալը լինի՝ ամեն ինչին հակառակ: Հետևաբար դուք չեք կարող Քրիստոսից բացի որևէ բանից կապված լինել՝ նույնիսկ ձեր հորը, մորը, եղբորը, քրոջը, ամուսնուն, կնոջը, որևէ մեկից: Դուք կապված եք Քրիստոսի, և միմիայն Նրա հետ: Այդ ժամանակ Աստված կօգտագործի ձեզ: Մինչ այդ չի կարող օգտագործել:

117 Երբեմն ես սահմաններն անցնում եմ և խիստ եմ խոսում մարդկանց հետ: Հասկանո՞ւմ եք: Ես, ես ուզում եմ այնպես անել, որ կտրեք ձեր կապերը: Ինչ-որ բանից պետք է սկսեք: Ինչպես օրինակ, երբեմն խոսում եմ այն կանանց դեմ, ովքեր կտրում են իրենց մազերը, հագնում են այդ անվայել հագուստները և պահում ու պահպանում են իրենց քրիստոնեական դավանությունը: Կասեք. «Դրանք փոքրիկ բաներ են»: Բայց ինչ-որ տեղից պետք է սկսել: Ուրեմն սկսեք այնտեղից՝ այբուբենից: Հասկանո՞ւմ եք: Կտրեք աշխարհիկ կերպարանքի կապերը և դարձեք Քրիստոսի բանտարկյալ: Հետո կշարունակեք մյուս կապերը կտրել, մինչև վերջին շղթաներն ընկնեն: Այդ ժամանակ դուք, դուք, դուք կդառնաք բանտարկյալ, դուք Նրա տիրապետության, Նրա, Նրա իշխանության տակ եք:

118 Հիմա, Մովսեսը գիտեր, որ ծնվել է ազատարար դառնալու համար: Նա այդ գիտեր: Նկատե՞լ եք նրա ձգտումը: Նա այդ գիտեր, որովհետև մայրն էր ասել, երբ դայակի դեր էր կատարում:

119 Կասկած չկա, որ երբ փոքրիկ Մովսեսը ծնվեց, նրա մայրն ասաց. «Գիտե՞ս, Մովսես, երբ...քո հայր Ամրամը և ես անդադար աղոթել ենք: Մենք գիտեինք և տեսնում էինք Խոսքի մեջ, որ ազատիչի գալու ժամանակն է: Եվ աղոթել էինք. «Տե՛ր Աստված, մենք ուզում ենք տեսնել այդ ազատիչին»: Մի գիշեր Տերը տեսիլքով մեզ հայտնեց քո ծնունդը և այն, որ դու ազատիչ ես լինելու: Մենք թագավորի հրամանից չվախեցանք: Մեզ համար կարևոր չէր, թե ինչ է ասում թագավորը: Հետո, մենք գիտեինք, որ դու ծնվել ես ազատիչ դառնալու համար: Հիմա, Մովսե՛ս, մենք գիտենք, որ չենք կարող քեզ մեծացնել, ինչպես հարկն է»:

120 Այժմ հիշեք, նրանք չորս հարյուր տարի է Եգիպտոսում էին: Հասկանո՞ւմ եք:

121 «Եվ մենք, մենք ուզում էինք քեզ տալ ճիշտ բաներ՝ ճիշտ կրթություն, ճիշտ ուսուցում: Ես վերցրեցի ու դրեցի քեզ փոքրիկ զամբյուղի մեջ և բաց թողեցի Նեղոսի վրա: Եվ ի՞նչ տարօրինակ է, որ հոսանքը փոքրիկ զամբյուղը տարավ շաքարաեղեգների և եղեգների միջով և բերեց ներքև, մղոներ հեռու, և շրջեց ուղիղ դեպի փարավոնի պալատը, որտեղ իր...փարավոնի դուստրն էր, որտեղ իր լողավազանն էր: Եվ ինչպես եղավ, որ, որ ես իմացա, որ նրան կին է պետք քեզ մեծացնելու համար»:

122 Այն ժամանակ, անշուշտ, այս շշերը չկային փոքրիկներին կերակրելու համար, դրա համար նրան կերակրող էր պետք: Այսպիսով...

123 «Իսկ Մարիամին ուղարկեցի ներքև: Նա կանգնեց այնտեղ և ասաց. «Ես գիտեմ, թե որտեղ կարելի կերակրող մայր գտնել», և եկավ ինձ կանչելու: Եվ, Մովսես, բոլոր դռները փակ են: Միրելի՛ս, դու հիմա տասնվեց տարեկան ես և լինելու ես փարավոնի որդին: Բայց մի օր դու ազատիչ ես դառնալու, ով այս մարդկանց դուրս է բերելու այստեղից»:

124 Մովսեսի հավակնությունները սկսեցին աճել: «Ես կսովորեմ, մայրիկ: Կուսումնասիրեմ ամենը, ինչ կարող եմ: Գիտե՞ս, թե ինչ կանեմ: Ես շատ կպարապեմ զինվորական դառնալու համար և կիմանամ, թե ինչպես պետք է այս ժողովրդին այստեղից հանեմ: Ես մեծ զորավար կդառնամ, եպիսկոպոս կդառնամ, մինչև իմանամ, թե ինչպես է դա արվում: Եվ ես, ես դուրս կբերեմ նրանց: Ես կստանամ իմ փիլիսոփայության դոկտորի կամ իրավաբանի դիպլոմները: Ես, ես կանեմ դա»:

125 Ինչպես «հայր Չինիքվին», եթե կարդացել եք նրա գրքերը: Լավ: Նա «ուզում էր դարձի բերել բոլոր բողոքականներին», գիտեք, բայց ինքը բողոքական դարցավ: Այսպիսով, տարիներ առաջ այս մեծ քահանան «հայր Չինիքվին», պետք է գտնեք նրա գիրքը և կարդաք: Նրանք իրեն «հայր» են անվանում: Նա ընդհամենը Չինիքվի եղբայր է, այ այդպես: Մենք ոչ ոքի «հայր» չենք անվանում: Այսպիսով մենք տեսնում ենք, որ, որ մենք... Նա սկսեց կարդալ Աստվածաշունչը, որ կարողանա դուրս գալ այնտեղ և ժխտի բողոքական կրոնը և այդ ամենը վերածի կաթոլիկության: Եվ երբ նա սկսեց կարդալ Աստվածաշունչը, Սուրբ Հոգին իջավ նրա վրա, նա Սուրբ Հոգին ստացավ, և այդ ժամանակ, այդ ժամանակ դարձավ նրանցից մեկը:

126 Հիմա, ուշադրությո՛ւն դարձրեք սրան, որ Մովսեսը լիարժեք կրթություն էր ստացել: Որովհետև նա, նա գիտեր: Ինքն այնքա՜ն խելացի, կրթված և ինտելեկտուալ էր: Չկար...Նա կարող էր նույնիսկ եգիպտացիներին սովորեցնել: Նա կարող էր դաս տալ նրանց հոգեբաններին: Նա կարող էր նրանց, նրանց գեներալներին սովորեցնել, թե ինչ է ռազմական ուժը: Նա մեծ մարդ էր: Եվ ժողովուրդը վախենում էր նրանից իր մեծության համար: Ո՛հ, ինչպիսի՜ կրթվածություն: Ո՛հ,

Աստված իմ: Նա արքեպիսկոպոսի կամ նույնիսկ պապի նման էր: Նա մեծ ու զորավոր մարդ էր: Եվ ինքը գիտեր, որ ծնվել էր դա անելու համար, և մեծ ձգտումով էր սովորում, որ իրականացներ դա:

127 Ճիշտ այնպես, ինչպես այսօր: Ես չեմ ասում, որ այդ դպրոցներում սովորած մարդիկ, ես դա չեմ ասում...Ինչպես հիմա այստեղ՝ արևմուտքում, պատրաստվում են հարյուր հիսուն միլիոն դոլարի արժողությամբ աստվածաբանական դպրոց կառուցել, հար...հարյուր հիսուն միլիոն դոլար արժողությամբ դպրոց: Իմ կարծիքով այդ փողերով կարելի էր ավելի շատ միսիոներներ ուղարկել միսիոներական դաշտ: Հասկանո՞ւմ եք: Ընմբռնո՞ւմ եք: Ըմբռնո՞ւմ եք: Բայց ամեն դեպքում ի՞նչ են անում, երբ ավատրում են այդ դպրոցները: Ի՞նչ են դառնում: Ռիկինների մի խումբ: Հենց այդպես: Եվ հետո նրանք այդպես դուրս են գալիս: Դա միշտ էլ եղել է, նրանցից մնացածն էլ, դա նույն ուղղությունն է:

128 Հիմա մենք պարզում ենք, որ երբ Մովսեսն իր ողջ կրթությամբ, այսօր էլ ողջ կրթությունով եպիկոպոսներ և այլն նշանակելով, մեծ, վեհ ձգտումներ, ի՞նչ ենք մենք անելու: Մեր հավակնությունները դառնում են մոտավորապես այնպիսին, ինչպիսին Մովսեսինը: Հասկանո՞ւմ եք:

129 Աստված մարդուն օգտագործելուց առաջ պետք է վերցնի նրանից իր հավակնությունները: Պետք է վերցնի իր բոլոր գիտելիքները:

130 Մովսեսը դուրս եկավ և ազատեց, սպանեց մի եգիպտացու: Եվ նա, և երբ նա դա արեց, տեսավ, որ մոլորության մեջ է: Նա չէր կարող այդ անել: Դա ճիշտ ձև չէր: Անհրաժեշտ եղավ, որ Աստված նրան տանի անապատ, ամայի, անբնակ վայր:

131 Ուշադրություն դարձրե՞լ եք. տարօրինակ է, որ Աստված անապատ է տանում այն մարդկանց, որոնց համար պատգամ ունի:

132 Նա Պողոսին տարավ անապատ, որ սովորեցնի և ցույց տա այդ մեծ տեսիլքի նշանակությունը, անապատում: «Գնա այսինչ անապատը»: Եվ Պողոսն այնտեղ մնաց, մինչև Աստված լիովին հայտնեց, թե ինչ պետք է անի ինքը:

133 Մովսեսի ժամանակ էլ Աստված նրան տարավ անապատ: Քառասուն տարի պահեց նրան այնտեղ

և վերցրեց իր ողջ աստվածաբանությունն ու իր ողջ ձգտումները: Ո՛հ, ինչպիսի՜ պահ էր իր համար, երբ հետ նայեց և գիտակցեց իր պարտությունը: Մենք էլ այս երեկո նույնը պետք է անենք, երբ տեսնում ենք մեր, մեր ձգտումները:

134 Նայե՛ք բժշկության արշավներին և տեսեք, թե արդյոք Տերն ինչ-որ բան չի արել մի քանի տարի առաջ, որ սկսի վերականգնել հիվանդների բժշկությունը և մյուս բաները:

135 Բոլորը, ամեն կազմակերպություն, քանի որ Դա չէր եկել իրենց կազմակերպություն, նրանք որոշեցին իրենց համար բժշկող բերել: Եվ ի՞նչ արեցինք մենք: Մի պահ քննենք դա: Մենք արել ենք նույն բանը, ինչ Մովսեսն է արել: Մենք դուրս ենք եկել և փորձել ենք ինչ-որ հրաշք ստեղծել: «Ես հիվանդության հոտ առա: Ես, ես, ես իմ ձեռքի վրա արյուն ունեմ», և հնարում ենք հրաշքներ: Հասկանո՞ւմ եք: Եվ ի՞նչ է արդյունքը: Որոշ մարդիկ այդ լարվածությունից հարբեցող կամ նյարդային դարձան և ցնորվեցին, և նրանք բոլորը հետ դարձան իրենց ճանապարհից՝ պենտեկոստեական նպատակից, կրկին վերադարձան կազմակերպություններին և նման բաներին: Հասկանո՞ւմ եք:

136 Ի՞նչ ենք մենք արել: Մի եգիպտացու ենք սպանել: Դա ճիշտ է: Մենք ջանացել ենք, չարչարվել, վճարել, երկար գիշերներ ենք անցկացրել աղոթաժողովներում, այնպես, որ մեր ձայնը կտրվել է: Եվ, և փորձել ենք ինչ-որ բան արտադրել, և ինչ-որ բան կատարելագործել, և ամեն նման բաներ, բայց հայտնաբերել ենք, որ այդ ամենը կատարյալ ձախողում էր: Մենք կարիք ունենք անապատ վերադառնալու: Ճիշտ է: Այո, սրը: Վրանային հավաքույթներ և պայքար: Իսկ ինչո՞ւ չհանձնվենք: Հենց դա պետք է անենք, հասկանում եք, հետ գնանք և հանձնվենք: Մենք արել ենք նույն բանը, ինչ որ նրանք են արել, նույն բանը, ինչ Մովսեսն է արել: Դա ոչ մի լավ բան չի տվել: Քառասուն տարի հետո նա դարձավ Աստծո Խոսքի բանտարկյալ: Ի՞նչ ենք մենք փորձում անել:

137 Երբ մեծ Օրհնությունները գա և դրսևորվեն բոլոր այդ մեծ փառավոր բաները, որոնց մասին Աստված մեզ հայտնել էր. թե ինչպես պետք է վերստին ծնվենք, ինչպես ստանանք Սուրբ Հոգին, ինչպես մկտրվենք Հիսուս Քրիստոսի Անունով, և այդ բոլոր բաներն այստեղ:

138 Տեսեք, մարդիկ Խոսքից կառչելու և Խոսքին լծվելու փոխարեն ի՞նչ են անում: Նրանք հանդես եկան իրենց

սեփական հարանվանական աստվածաբանությամբ, որն արդեն պարտություն է կրել և փորձել են արտադրել մի բան, որը նման է ճշմարտությանը:

139 Ավելի լավ է ես այստեղ կանգ առնեմ: Հասկանո՞ւմ եք: Վստահ եմ, որ բավական իմաստուն եք, որ հասկանաք, թե ինչ եմ ուզում ասել: Հասկանո՞ւմ եք: Բայց, տեսեք, թե ինչ ստացվեց դրանից: Մտածե՛ք դրա մասին:

140 Ի՞նչ ունենք մենք այս երեկո: Կազմակերպություններով լցված մի, մի, մի ազգ, որոնք մերժում են Աստծո Սուրբ Գիրքը, ովքեր Սուրբ Հոգու կյանքը համարում են «մտային հեռազգացություն», ովքեր մերժում են, որ նման բան մտնի իրենց եկեղեցին, և թույլ չեն տալիս մեկ Բառ ասել օձի սերմի, հավիտենական անվտանգության և այն ամենի մասին, որոնք Սուրբ Հոգին բացահայտել և ապացուցել է, որ Խոսքի համաձայն է: Ես մարտահրավեր մարտահրավերի վրա եմ արել, որ գան ու ինձ ապացուցեն, որ դա սխալ է:

141 Ի՞նչ ունեն նրանք: Նույնը, ինչ ունեին Լյութերը, մնացածը, հասկանում եք, սպանեցին եգիպտացու: Ի՞նչ պետք է...Ի՞նչ էր դա: Գուցե դրանով որևէ մարդ... դադարել է գողանալ կամ հավատարիմ ապրել իր կնոջ հանդեպ: Բայց ի՞նչ սարքեցիք նրան դրանից հետո: Եկեղեցու անդամ: «Եկեք, միացեք մեր խմբին»: Հասկանո՞ւմ եք:

142 Այդ նեխած դիակը միակ բան էր, որ նա կարող էր մատնացույց անել, նրա հաջողությունը, քառասուն տարվա ուսման արդյունքում. հոտած մի եգիպտացի, որ պառկած էր այնտեղ, նեխած և մեռած:

143 Համարյա նույնն է այս երեկո: Միակ բանը, որը մենք կարող ենք մատնացույց անել (այսպես կոչված) այս անցած արթնությունից, մի խումբ հոտած եկեղեցու անդամներ են, որոնք Աստծո մասին գիտեն նույնքան, որքան հոտենտոտները՝ եգիպտական գիշերվա մասին: Ճիշտ է: Նրանց Աստծո Խոսքն ես ասում, իսկ նրանք ասում են. «Ես դրան չեմ հավատում»: Ասում են. «Ինչ ուզում են ասեն, ես չեմ հավատում»: Հասկանո՞ւմ եք: Հասկանո՞ւմ եք; Ահավոր է, որ ստիպված ենք դա ցույց տալ բոլոր լարվածությունների և այն ամենի համար, որ ստացել ենք:

144 Գուցե կարող ենք ցույց տալ մի մեծ դպրոց, բայց այն մեռած է: Կարող էինք կազմակերպություն ցույց

տալ, բայց այն մեռած է: Գարշահոտ է: Այն բաների նման, որոնցից մենք դուրս ենք եկել: «Ինչպես խոզն է վերադառնում իր ցեխի մեջ, և շունը իր փսխածին», երբ մենք հետ ենք շրջվում: Մեկ մեռած եգիպտացի:

145 Անկասկած մեկն ասել է. «Մովսես մի՞թե այլևս կարեկցանք չունես ժողովրդի հանդեպ: Դրա համար ես դու կանչված եղել»: Մեկը, ով ճանաչում էր Մովսեսին և գիտեր, որ ինքը դրա համար էր կանչված: «Եվ չ...Դու կորցրե՞լ ես կարեկցանքը ժողովրդի հանդեպ»:

«Ոչ, պարոն»:

146 «Ուրեմն ինչո՞ւ չես անում այնտեղ *այս* բանը: Ինչո՞ւ չես `փորձում այստեղ *այն* բանը: Ինչո՞ւ չես գնում մյուսների հետ»:

147 Բայց Մովսեսը մնաց այնտեղ, որ ազատվի ամեն ինչից, մինչև ունեցավ փորձառություն վառվող մորենու մոտ, որն ասում էր Խոսքը. «ԵՍ Եմ Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստվածը: Ես հիշում եմ Իմ խոստումը: Եվ Ես իջել եմ նրանց ազատելու: Ես քեզ եմ ուղարկում դրա համար»: Դա այն էր:

148 Նա տեսավ Խոսքը, ոչ թե մարդկանց ձգտումները կամ փափագները: Ի՞նչ դարձավ նա: Նա այլևս չէր ուզում հանդիպել եգիպտացիներին, չէր ուզում կապ ունենալ նրանց հետ, նա բանտարկյալ էր դարձել: Ամեն: Քառասուն տարի փախուստի մեջ, զրկանքում, բայց հետո բանտարկյալ դարձավ վառվող մոռենու առջև, հզոր Մովսեսն իր ողջ ինտելեկտով: Աստվածաշունչն ասում է, որ Եգիպտոսում Մովսեսը զորավոր էր թե՛ խոսքով, և թե՛ գործով:

149 Բայց տեսեք, թե ինչ արեց այդ հզոր աստվածաբանը վառվող մորենու Ներկայության մեջ: Նա պարզապես խոստովանեց իր անկարողությունը: Երբ նա տեսավ Աստծո իսկական նպատակը, խոստովանեց, որ անկարող էր այն իրականացնել: Մինչդեռ ստացել էր ողջ աստվածաբանական կրթությունը, որը հնարավոր է ստանալ, սովորել էր իրենց լավագույն դպրոցում: Բայց ի՞նչ կարող էր նա անել, երբ ինքը...այդ Կրակե Սյունը կախված այնտեղ՝ մորենու մեջ: Ասաց. «Ես նույնիսկ խոսել չգիտեմ: Ըհը: Տե՛ր, ո՞վ եմ ես, որ գնամ»: Տեսնո՞ւմ եք:

150 «Կոշիկներդ հանի՛ր, Մովսես: Ես ուզում եմ խոսել քեզ հետ: Երկրպագիր, նույնիսկ կոշիկներդ հանիր: Դու, դու

նորից ոտաբոբիկ կանգնած ես գետնին։ Ես ուզում եմ խոսել քեզ հետ»։

151 Նույնիսկ խոսել չէր կարողանում։ Ի վերջո դարձավ ընտրյալ բանտարկյալ, ընտրյալ մարգարե, ինչպես Պողոսն էլ ընտրվեց։ Մովսեսն ընտրվել էր ազատարար լինելու։ Այնուհետև ի վերջո Աստծո ընտրյալ հպատակը դարձավ Իր բանտարկյալը։ Ո՛հ, ալելո՛ւիա։ Նա կարող էր շարժվել միայն այն ժամանակ, երբ Աստծո Խոսքն էր շարժում իրեն։ «Ի՞նչ կասեմ. ո՞վ է ինձ ուղարկել»։

«ԵՍ ԵՄ»-ը։

«Ինչպե՞ս կանեմ»։

«Ես քեզ հետ կլինեմ»։

152 Այո, Տե՛ր, ինչպես կամենում ես։ Ահա ես»։ Ո՛հ, Աստված իմ։ Նա բանտարկյալ է։

153 Նա դեմ է գնում է այն բանին, ինչը լավագույնն էր կարծում։ Հիմա, Նա սովորել էր զորքին հրամայել. «Սրերը վե՛ր։ Աջ դարձ»։ Վարժված էր հրամայել. «Կառքերը շարվե՛լ։ Նիզակներն առաջ։ Մարտի՛»։ Ահա թե ինչպես էր նա պատրաստվում վերցնել այն։ Նա այդպես էր մարզված։

Բայց նա ասաց. «Ի՞նչ եմ օգտագործելու»։

Ասաց. «Քո ձեռքում ի՞նչ կա»։

154 «Գավազան»։ Աստված երբեմն գործում է մարդկային տրամաբանության համար ծիծաղելի ձևով։ Հասկանո՞ւմ եք։ Մովսեսը ձեռքին գավազան ուներ։ Մորուքը կախված էր։ Ութսուն տարեկան էր։ Իր կինը նստած է ջորու վրա, երեխան՝ ծնկներին։ Իր դողդոջուն ձեռերով հենվում էր իր գավազանի վրա։ Բայց գլուխը բարձր էր պահում, որովհետև ուներ ԱՅՍՊԵՍ ԷԱՍՈՒՄ ՏԵՐԸ։ Ինչո՞ւ։ Նա ամրացրել էր իր խարիսխը։

155 Նա բանտարկյալ էր։ «Ես շարժվում եմ միայն այն ժամանակ, երբ Խոսքն է ինձ առաջնորդում։ Ես խոսում եմ միայն այն ժամանակ, երբ Խոսքն է խոսում»։

«Ո՞ւր ես գնում»։

156 «Ես հանձնարարություն ունեմ. կանգնել փարավոնի առջև և այս գավազանով ցույց տալ իրեն, որ ինձ Աստված է ուղարկել»։ Ամեն։

«Հետո ի՞նչ ես անելու»։

«Աստված ցույց կտա, երբ սա արած կլինեմ»։

157 Ահա: Դուք միայն մեկ բան ունեք անելու այս երեկո, առաջին քայլը, հանձնվել, դառնալ բանտարկյալ: Մի՛ մտածեք ձեր կամ մեկ այլ բանի մասին: Դարձե՛ք բանտարկյալ:

158 Մովսեսը բանտարկյալ դարձավ, խոստովանեց, որ նույնիսկ խոսել չի կարողանում: Ի վերջո, երբ Աստծո ձեռքում էր, կարող էր առաջ շարժվել միայն այն ժամանակ, երբ Աստված էր իրեն առաջ տանում: Որտեղ, Նա ասաց իրեն Խոսքը: Մովսեսը գիտեր, որ դա Խոսքն էր, այդ ժամանակ նա ենթարկվեց Խոսքին: Եվ Սուրբ Հոգին այնտեղ՝ Աստված, նրան լծեց Աստծո կամքին:

159 Նույնն արեց Պողոսի հետ: Ճի՞շտ է: Նա լծեց Պողոսին՝ ցածրահասակ, կոր քթով, սարկաստիկ հրեային, ո՛հ, որի վրա ամեն տեղ գրված էին աստվածաբանական դոկտորի և իրավաբանության դոկտորի աստիճանները: Բայց Աստված ասաց. «Ես ցույց կտամ նրան, թե ինչ է կրելու Խոսքի համար»: Տեսնո՞ւմ եք: Եվ նա…

160 Հետո Պողոսն այնտեղ նստած տեսավ Խոսքը, տեսավ, որ դա Հիսուսն էր, այդ ժամանակ նա բարձրացրեց ձեռքերը և լծվեց Նրան: Աստծո սերը նրան լծեց Խոսքին: «Նա Իմ Անունը կտանի հեթանոսների առջև»: Նա գնաց այնտեղ:

161 «Մովսե՛ս, ԵՍ քո հայրերի Աստվածն եմ: ԵՍ Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստվածն եմ: Ես հիշում եմ Իմ խոստումը, և դրա ժամանակը մոտ է: Ես տեսնում եմ Իմ ժողովրդի տառապանքները: Ես հիշում եմ Իմ խոստումը և եկել եմ քեզ լծելու: Դու գիտես, թե ինչ է ասում Խոսքը: Հիմա, Ես քեզ լծել եմ, որ գնաս այնտեղ, զորություն եմ տվել, որ գնաս այնտեղ և ազատես Իմ ժողովրդին: Վերցրո՛ւ այս գավազանը քո ձեռքը որպես վկայություն, որովհետև դրա միջոցով կատարված հրաշքն ես տեսել»: Ճիշտ այնպես, ինչպես Դավիթն իր պարսատիկի միջոցով: Հասկանո՞ւմ եք:

162 Մովսեսը լծվեց և գնաց: Վերջապես Աստված ուներ մեկին, ով ենթարկվում էր Իրեն, կապված էր Իրեն և չէր շարժվում, մինչև Աստծո Խոսքը չէր շարժում նրան: Եթե միայն մարդիկ դա անեին այսօր: Ահա նա Նրա բանտարկյալն է, սիրո բանտարկյալ, կապված Աստծո հետ սիրո լծով, ինչպես Պողոսը, որը նույնպես կապված էր Աստծո հետ սիրո լծով:

163 Ճիշտ այնպես, ինչպես Պողոսը, երկուսն էլ նույն

կրթությունն էին ստացել: Մովսեսը սովորել էր, գիտեք, որ ռազմական հզորությամբ ազատեր Իսրայելի զավակներին: Պողոսը սովորել էր այդ ժամանակվա աշխարհում իր մեծ եկեղեցիական ուժով նրանց հանել հռոմեացիների ձեռքից և ազատ արձակել: Ուսումնական մեծ դպրոցներ բացվեցին Գամաղիելի ժամանակ:

164 Եվ երկուսն էլ գնացին անապատ, ըհը. վերադարձան ուրիշ մարդիկ դարձած: Երկուսն էլ տեսան Կրակի Սյունը: Երկուսն էլ մարգարե էին: Ճի՞շտ է: Երկուսն էլ մարգարե էին: Եվ երկուսի հետ էլ խոսեց Կրակի Սյունը, ճիշտ է, ազատագրելու համար եկած: Ահա նրանք. անցան անապատով: Նրանք թողեցին իրենց տունը և գնացին անապատ՝ բացահայտելու համար...Նրանք թողեցին իրենց ժողովրդին և ամեն ինչ՝ գտնելու համար Աստծո կամքը: Հասկանո՞ւմ եք:

165 Նրանք մի ձևով էին սովորել, Աստված դա փոխեց և ուրիշ ձևով սովորեցրեց: Նրանք լիովին բանտարկյալ էին դարձել, այնպես, որ այլևս չէին գործում իրենց ուզած ձևով, այլ ինչպես Աստված կամենում էր: Նա նույնն է երեկ, այսօր և հավիտյան:

166 Եվս տաս րոպե ունե՞նք:

167 Ես արագ կանդրադառնամ և ս մեկ կերպարի: Մեկն աչքերիս առջև է. նրա անունը Հովսեփ է: Նա ընտրյալ որդի էր: Հիսուս Քրիստոսի կատարյալ խորհրդապատկեր: Նա մարգարե էր ծնվել: Նա նույնպես մարգարե էր: Տեսնո՞ւմ եք: Նա տեսիլքներ էր տեսնում: Եվ երբ նա դեռ փոքրիկ տղա էր, տեսիլք տեսավ, որ ինքը նստած է գահի վրա, և եղբայրները խոնարհվում են իր առջև: Հասկանո՞ւմ եք: Բայց ուշադրություն դարձրեք: Նա դարձավ...Նա զգում էր, որ ինքը մեծ անհատ է: Հասկանո՞ւմ եք: Եվ նրանք բոլորը...

168 Եվ ի՞նչ պետք է աներ Աստված: Նա նրա հետ էլ վարվեց այնպես, ինչպես մյուսների հետ: Որովհետև Մովսեսն ազատիչ էր, Պողոսն ազատիչ էր, իսկ հիմա Հովսեփն էր ազատիչ: Նա իր ժողովրդին փրկեց սովից:

169 Աստված ինչպե՞ս վարվեց իր հետ: Բանտ ուղարկեց, ուղիղ բանտ: Այո, պարոն: Հիշե՛ք. նա իր եղբայրների կողմից վաճառվեց մի եգիպտացու: Նրանք էլ նրան վաճառեցին Պետափրեսին: Պետափրեսը մի քիչ ազատություն տվեց նրան, և առաջին բանը, որ դուք գիտեք, դա վերցվեց նրանից: Եվ ահա նա նստած

բանտում լալիս ու լալիս է: Աստված պետք է դա վերցներ իրենից:

170 Այժմ ուշադրությո՛ւն դարձրեք: Բայց այդ ողջ ընթացքում, կարծում եմ, այդ բանտում, նա հիշում էր, որ տեսիքն ասում է, որ ինքը նստելու է գահին, իսկ իր եղբայրները խոնարհվելու են իր առջև, որովհետև գիտեր, որ իր պարգևն Աստծուց է: Եվ նա գիտեր, որ դա իրականանալու է:

171 Եթե միայն մենք կարողանայինք պահել դա մեր մտքում, որ Աստծո Խոսքի համաձայն այս վերջին օրերում Աստված ունենալու է մի Եկեղեցի, ունենալու է մի ժողովուրդ: Եվ այս բաները, որոնք Նա խոստացել է, կատարելու է: Նա ասել է, որ կատարելու է, և մենք ապրում ենք այդ ժամանակներում: Մենք այնտեղ ենք: Նա ջանում է միայն մեզ դարձնել բանտարկյալներ՝ Իրեն շղթայված:

172 Լսել եք այդ հին երգը, որ երգում են. «Հիմա ես փակված եմ Աստծո հետ»: Ես ուզում եմ փակվել Աստծո հետ: Ահա, թե որտեղ ես մտածեցի սրա մասին: Փակվել Աստծո հետ, ուրիշ ոչինչ, և դուք կարող եք շարժվել, երբ Աստված ասում է՝ շարժվի՛ր: Դուք անում եք միայն այն, ինչ Աստված ասում է, որ անեք, տեսնում եք, այնժամ դուք փակված եք Աստծո հետ:

173 Հիմա հիշե՛ք, Հովսեփը մտածում էր: Նա նույնպես դարձավ կատարյալ ձախողված, իր համար: Այն ամենը, ինչ գիտեր, ինչ հասկացել էր և այլն, ձախողվել էր: Ոչինչ չէր ստացվում: Հասել էր այն աստիճանի, որ ոչ ոք չէր ուզում իրեն լսել: Նա բատնարկյալ էր: Հասկանո՞ւմ եք: Նա մի իրավիճակում էր, որ անհավատները չէին հավատա իրեն: Հասկանո՞ւմ եք, թե ինչ եմ ուզում ասել: Նրա ծառայությունն անզոր էր: Մարդիկ շրջվում էին իրենից: Նրան ոչ մի ուշադրություն չէին դարձնում բանտում: Ի՞նչ օգուտ իր ծառայությունից: Նա կարող էր կանգնել բանտի վանդակաճաղերի մոտ և քարոզել նրանց. նրանք կանցնեին առանց կանգ առնելու: Հասկանո՞ւմ եք: Բայց նա դարձել էր բանտարկյալ: Աստված նրան բանտարկյալ էր դարձրել, մինչև ամեն բան իր տեղն ընկնի: Ասաց. «Ահա Իմ այրը»: Փա՛ռք: Լիովին պարտված:

174 Վերջապես Տերը եկավ իր մոտ, բանտ: Ինչպես Պողոսի մոտ, ինչպես մյուսների մոտ, Նա եկավ իր մոտ: Եվ Նա օգտագործեց այն պարգևը, որ տվել էր՝ իրեն

այնտեղից ազատելու համար։ Դա ճիշտ է։ Նա նրան դուրս բերեց բանտից։ Ի՞նչ արեց նա։ Հենց Աստված նրան հանեց բանտից, զորություն տրվեց նրան թագավորի, իր թագավորի կողմից, որի կողքին նա նստեց, ում ենթական էր։ Նա հանվեց բանտից և իրեն իշխանություն տրվեց, այն, ինչ նա ասում էր, պետք է կատարվեր։ Ամեն։

175 Բանտում գտնվելու ժամանակ նա միշտ հիշում էր, որ ինքը ծնվել էր որոշակի նպատակի համար։ Նա նստելու էր թագավորի կողքին։ Մյուսները պետք է խոնարհվեին իր առջև։ Տեսիլքում էր այդպես ասվում։ Ամեն։ Բայց մինչև տեսիլքի իրականանալը նա պետք է բանտարկյալ դառնար։ Ամեն։ Հետո նա կառավարիչ դարձավ։ Եվ երբ նա դուրս եկավ բանտից, դարձավ Աստծո Խոսքի բանտարկյալ, այնպես որ կարող էր ասել միայն այն, ինչ Աստված էր իրեն պատվիրում, այդ ժամանակ Աստված գործում էր իր միջոցով։

176 Ուշադրություն դարձրեք, որ Մովսեսը իշխանություն ուներ կապելու փարավոնի իշխաներին իր ցանկությամբ։ «Եթե այս լեռանն ասեք՝ տեղաշարժվիր»։ Ըհը։ Ըհը։ Նա իշխանություն ուներ կապելու փարավոնի իշխաներին։ Լինեին նրանք սարկավագ, քահանա, կամ ով էլ որ լինեին, պետական գործիչ կամ մեկ ուրիշ բան։ Եթե նա ասեր. «Ես ձեզ կապում եմ», նրանք կապված կլինեին, վերջ։ Նա կարող էր դա անել մի հրամանով, իր ցանկությամբ։ Ամեն։ Փա՜ռք Աստծուն։

Ո՛հ, ինձ միայն երեք րոպե է մնում, ես ուզում եմ խոստումս կատարել։

177 Հիմա, մենք տեսնում ենք, որ նա, նա՝ աշխարհի բանտարկյալը, դարձացավ Աստծո բանտարկյալ։ … Պողոսը, նույն ձևով։ Մովսեսն էլ նույն ձևով իր սեփական մտքերի բանտարկյալից վերածվեց Աստծո բանտարկյալի։ Իսկ երբ դուրս եկավ, Աստծուց ստացած իշխանություն ուներ։ Եվ երբ Պողոս դարձավ…Երբ Մովսեսի սեփական մտածողությունը, նա տվեց և զրկվեց դրանից, դարձավ Քրիստոսի Խոսքի բանտարկյալ։ Նա չէր կարող մի քայլ անել, եթե…

Ասում ես. «Քրիստոսի՞»։

178 «Նա Քրիստոսի նախատինքը ավելի մեծ հարստություն համարեց, քան Եգիպտոսի գանձերը»։ Այնպես որ նա Քրիստոսի բանտարկյալն էր, ինչպես Պողոսը։

179 Հիշե՛ք, որ երեքն էլ մարգարե էին: Հասկանո՞ւմ եք: Եվ նրանք պետք է զրկվեին իրենց սեփական մտքերից, որ դառնային Աստծո կամքի և ճանապարհների բանտարկյալ:

180 Ուշադրություն դարձրեք, որ Հովսեփն իշխանություն ուներ մեկ բառով կապելու կամ արձակելու: Նա կարող էր ասել. «Ես քեզ արձակում եմ իմ թագավորի անունով»: Ամեն: Փարավոնը Հովսեփին դարձրեց իր որդին:

181 Քրիստոսը Իր սիրո բանտարկյալներին դարձնում է Իր որդիները: Եվ նրանց տալիս է նույն իշխանությունը, ինչ Ինքն ունի: Հովհաննու Ավետարանի 14:12–ում ասվում է. *«Նա, ով հավատում է Ինձ»*, տեսնում եք, *«գործերը, որ Ես անում եմ՝ ինքն էլ պիտի անի, և դրանցից ավելի մեծ գործեր պիտի անի»:* Քրիստոսի սիրո բանտարկյալը զորություն է ստանում իր Թագավորից, Որը Քրիստոսն է: Ամեն: *«Ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե այս լեռանն ասեք՝ տեղաշարժվիր, և ձեր սրտում չկասկածեք, այլ հավատաք, որ ձեր ասածը կլինի, այդպես էլ կլինի»: Եթե Իմ մեջ մնաք, Իմ Խոսքերն էլ ձեզ մեջ մնան*. եթե կապված եք Ինձ հետ», որովհետև Նա և Իր Խոսքը նույնն են: *«Սկզբում էր Բանը (Խոսքը) և Բանն Աստծո մոտ էր: Եվ Բանը մարմին դարձավ և մեր մեջ բնակվեց:* Հիսուս Քրիստոսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան: *Եթե Իմ մեջ մնաք»*, ոչ թե *այստեղ* և *այնտեղ*, *«Իմ մեջ մնաք, Իմ Խոսքերն էլ ձեր մեջ մնան, ինչ էլ որ կամենաք, կամ ինչ էլ որ ասեք, կլինի ձեզ»:* Նա իշխանություն ուներ:

182 Ուշադրություն դարձրեք, որ ազատվելուց առաջ Հովսեփին դուրս տարան և սափրեցին: Մի քանի բաներ պետք է սափրվեին թագավորին հանդիպելուց առաջ: Հասկանո՞ւմ եք:

183 Ո՛հ, երբեմն Աստված Իր ժողովրդին դուրս է տանում և «սափրում է» իրենց սեփական կամքից մի քանի բաներ, ցույց է տալիս, որ նրանք չեն կարող անել այն, ինչ ուզում են: Դուք գիտեք, ես ինչ եմ ուզում ասել: Նրանք, նրանք ազատություն չունեն անելու այն, ինչ իրենք են ուզում: Լիազորություն ստանալու և Քրիստոսի սիրո ծառա դառնալու համար նախ պետք է «սափրվեն» նոր ներկայանան: Երբեմն Աստված նրանց անապատ է տանում սափրելու համար: Հետո նրանց՝ օծվածներին, դուրս է տանում իրականացնելու համար այն ձրագիրը, որի համար նրանց սահմանել է: Հասկանո՞ւմ եք, թե ինչ եմ ուզում ասել:

Եղբայրներ, մենք վերջին ժամանակներում ենք։

184 Հիշեք, թե Նա ինչ է արել բոլոր մնացած դեպքերում։ Նա ամեն անգամ վերցնում է մի մարդու և նրան Իր բանտարկյալն է դարձնում, որ նա թողնի իրենը։ Այդ մարդը պետք է թողնի իր ողջ իմացածը, մոռանա իր ստացած կրթությունը և այլն, որ ճանաչի Աստծո կամքը և Աստծուն հետևի։

185 Մարդը չի կարող միաժամանակ հետևել իր սեփական ճանապահներին և Աստծուն։ Այդ երկուսը հակառակ են իրար։ Դուք չեք կարող միաժամանակ գնալ և՛ արևելք և՛ արևմուտք։ Դուք չեք կարող միաժամանակ գնալ և՛ աջ և՛ ձախ։ Դուք չեք կարող միաժամանակ անել և՛ ճիշտը և՛ սխալը։ Դուք չեք կարող միաժամանակ հետևել և՛ մարդուն և՛ Աստծուն։ Ո՛չ, պարոն։ Կամ Աստծուն ենք հետևում, կամ մարդուն։

186 Հիմա, ուրեմն, եթե հետևում եք Աստծուն և հնազանդվում եք Աստծուն, դառնում եք այդ Աստծո, այդ Խոսքի, այդ կամքի բանտարկյալը։ Ինչ էլ ասեն, դուք մնում եք Խոսքի բանտարկյալը։

187 Լսե՛ք։ Մենք վերջին ժամանակներում ենք։ Ուզում եմ այս վերջին ոոպեների ընթացքում երկյուղով և ակնածանքով ասել սա։ Տեսե՛ք։ Իմ կարծիքով, այն, ինչ Աստված անելու է, պետք է անի ու անելու է այս վերջին օրերում, սա է՝ գործիք գտնել Իր հնձի համար։ Նա պետք է գործիք գտնի հացահատիկը կալսելու համար։ Ամեն ագարակատեր, որը հունձ է անելու, պետք է գործիք ունենա. անկասկած նա պետք է սուր մանգաղ ունենա կամ որևէ գործիք հացահատիկը կալսելու համար։ Եվ հունձը հասել է։

188 Ո՛վ Աստված, վերցրու մեզ Քո ձեռքերի մեջ։ Դարձրու մեզ Քո սիրո բանտարկյալ։ Օգտագործիր մեզ որպես գործիքներ, որպեսզի այս մեղավոր երկիրը, այս անիծյալ երկիրը, որի վրա ապրում ենք այսօր, հասկանա, որ Հիսուս Քրիստոսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան։

189 Իսկ ինձ համար խնդրում եմ սա. ինձ բանտարկյալ դարձրու։ Եթե բոլոր եղբայրներս երես թեքեն ինձանից, բոլոր ընկերներս երես թեքեն ինձանից, ես ուզում եմ լինել Հիսուս Քրիստոսի և Իր Խոսքի բանտարկյալ, որ լծված լինեմ Իր Խոսքին Սուրբ Հոգու միջոցով, տեսնեմ, որ Սուրբ Հոգին հաստատում է Աստծո Խոսքը այն բոլոր

բաներով, որոնց իրականացման մասին ասել է: Ես ուզում եմ լինել Հիսուս Քրիստոսի բանտարկյալ:

Աղոթենք:

190 Մինչ մեր գլուխները խոնարհված են, կուզենայի իմանալ սա՝ թե ունեք ինչ-որ բան դառնալու ձգտում կամ ուզում եք իրականացնել մի նպատակ, որը եսասիրական է, մի՞թե չենք կարող հիմա հրաժարվել դրանից:

191 Գուցե մի երիտասարդ տղա նայում է իր շուրջը և ասում. «Ես կդառնամ, երբ ես մեծանամ կուզեմ *այս* դառնալ, *այն* դառնալ»: Կարո՞ղ եք զգալ, որ Աստծո կամքն է մտնում ձեր կյանքի մեջ և ասեք. «Ո՛չ, ո՛չ: Ըհը: Ըհը: Ես կորցրել եմ իմ սեփական հավակնությունները: Վերջերս Սուրբ Հոգին խոսել է ինձ հետ: Ես, ես, ես, ես ուզում եմ հանձնվել Աստծուն և լինել գործիք հացահատիկը կալսելու համար այս վերջին օրերում:

192 Գուցե որևէ երիտասարդ աղջիկ հավակնություն ունի ունենալ գեղեցիկ տիկնոջ կերպար, կամ, կամ դառնալ փոքրիկ հմայիչ տիկին, կամ գուցե մի օր կարիերա ունենալ Հոլիվուդում: Ես, ես ուզում եմ իմանալ, չէ՞ք ուզում հիմա թողնել ձեր ձգտումները Աստծո և Իր Խոսքի ներկայության մեջ և լսել Աստծո կանչը ձեր կյանքում: Աստված գիտի, թե ինչպիսին եք դուք:

193 Գուցե այստեղ որևէ հովիվ կա, սպասավոր, կամ եկեղեցում աշխատող: Ես այստեղ ժամանակ առ ժամանակ եմ գալիս: Ես, ես չեմ ճանաչում այս երեկո այստեղ նստած մարդկանց մեկ երրորդին, բայց ես...այս մի բուռը, որն այստեղ է, բայց ես կուզենայի իմանալ, թե արդյոք կա այնպիսի մի մարդ, որը կուզենա ասել. «Կարևոր չէ, թե ինչ են ասում: Ես հիմա Աստծո ծառան եմ: Ես, ես, ես քարոզելու եմ Իր Խոսքը անկախ ամեն ինչից: Ինձ համար կարևոր չէ թե...իմ, իմ կազմակերպությունն ինձ կվռնդի, ես կմնամ այդ Խոսքի հետ: Ես, ես անելու եմ դա: Իմ կամքը Աստծո կամքն է: Աստծո կամքն էլ իմ կամքը: Ես ուզում եմ լինել Հիսուս Քրիստոսի բանտարկյալ: Նրա շնորհքով և օգնությամբ ես կլինեմ այդպիսին»:

194 Մտածե՛ք դրա մասին, մինչ մենք խոնարհել ենք մեր գլուխները: Քանի՞սն ունեն այդ ձգտումն այսօր: Չէի՞ք բարձացնի ձեր ձեռքը: Ես էլ եմ ձեռքս բարձրացնում: Ես թողնում եմ ամեն բան: Գլուխները խոնարհած՝ դանդաղ երգենք, մինչ մտածում եք դրա մասին և աղոթում:

Քեզ կհանձնվիմ,

Քեզ կհանձնվիմ
Անպայման օրհնյալ Փրկիչ իմ,
Քեզ կհանձնվիմ։

Քեզ կհա…

195 Մտածո՞ւմ եք լրջորեն։ «Ես ուզում եմ բանտարկյալ լինել»։

Քեզ…

«Տար ինձ, Տե՛ր։ Վերցրու ինձ, Տեր, տար ինձ այս երեկո Բրուտի տունը, կոտրիր ինձ ու նորից ձուլիր…?…»։

…օրհնյալ Փրկիչ իմ,
Քեզ կհանձնվիմ։

196 Երկնայի՛ն Հայր, մինչ երգը շարունակվում է, ես մտածեցի, որ ավելի լավ է, որ ես, ես հիմա դադարեմ երգել և զրուցեմ Քեզ հետ մի պահ։ Մինչ մարդիկ մտածում են. «Քեզ կհանձնվիմ», Հայր, թող մենք այնպես վարվենք, կարծես սա մեր վերջին հնարավորությունն է։ Գանք անկեղծությամբ, գանք Տիրոջ սեղանին մոտ, լվացված հագուստով, լվացած հոգով, լվացած կամքով, լվացած ձգտումներով, որ հանձնվենք։

197 Եվ թող Աստված վերցնի Իր Խոսքը և մեզ միասին կապի Իր լծի տակ, Աստծո Խոսքով։ Եվ թող Սուրբ Հոգին վերցնի մեզ, մինչ զգում ենք, թե ինչպես է լուծն ամրանում մեր սրտի շուրջը, «Այս երեկոյից սկսած ես ընդունում եմ Քո Խոսքը։ Հիմա մի՛ մտածիր քո սեփական մտքերով։ Մտածի՛ր Իմ մտքով։ Մտածի՛ր Իմ կամքի մասին։ Ես քեզ կառաջնորդեմ»։ Ո՛վ Աստված, թող սա լինի յուրաքանչյուրիս փորձառությունը։

198 Այստեղ նստած են երիտասարդներ, այր ու կին, մի քանիսն էլ պատրաստվում են ամուսնանալ։ Այստեղ նստած են տարեց մարդիկ, ծառայողներ, նրանք ճանապարհին են։ Եվ Տե՛ր, այստեղ է Նևիլ եղբայրը, ես, հասնում ենք սանդուղքի վերևի աստիճանին։ Մեր օրերը հաշված են։ Մենք առաջվանից ավելի զգույշ ենք քայլում։ Մենք նայում ենք, թե որտեղ ենք քայլում։ Ֆիզիկապես առաջվա նման վստահ չեն մեր քայլերը։ Բայց Տե՛ր, տեսնելով, որ մեր կյանքը հասնում է ավարտին, գիտակցում ենք, որ ոչ մեկն էլ չի կարող վստահ քայլեր, եթե Դու նրա ձեռքից չբռնես։

199 Հիմա, ո՛վ Աստված, խնդրում ենք վերցրու մեզ։ Վերցրու մեր սրտերն ու կամքը Քո ձեռքը, և թող այս երեկո դառնանք Խոսքի բանտարկյալ, Քրիստոսի

բանտարկյալ: Թող այստեղ ապրենք աստվածապաշտ կյանքերով: Թող այս կանայք, երիտասարդ կանայք, տղամարդիկ, տղաներն ու աղջիկները իրենց կյանքը հանձնեն, Տե՛ր: Եվ թող իրենց ձգտումը դառնա Հիսուս Քրիստոսին ծառայելու ձգտում, և թող Նրա աստվածային շնորհքի և կամքի բանտարկյալներ դառնան: Շնորհի՛ր դա, Տե՛ր:

200 Ահա այն ամենը, ինչ ես կարողացա անել, Տեր: Իմ այս մի քանի կոտրված բարեռը...և ես, ես վստահում եմ Քեզ, որ դու դրանք իրենց տեղը կդնես: Այնքան շոգ է այստեղ: Մարդիկ կուզենային լսել, բայց իրոք շատ շոգ է: Շատերն էլ տուն պիտի գնան, որ կարողանան շուտ գնալ աշխատանքի: Բայց թող այս սերմերը թափանցեն նրանց սրտի մեջ, «բանտարկյալ»:

201 Վերադարձեք տուն և ասեք ձեր կնոջը, երբ նրանք... այս ցերեկ կամ այս երեկո աղոթելուց առաջ, երբ ձնկի կգաք ձեր մահճակալի մոտ: Նայեք իրար և ասեք. «Սիրելիս, ի՞նչ ես մտածում այս երեկո մեր լսածի մասին: Մենք իրո՞ք դարձել ենք Քրիստոսի և Իր կամքի բանտարկյալ, թե՞, թե՞ շարունակում ենք մեր սեփական կամքով շարժվել»:

202 Թող երիտասարդ տղամարդիկ և կանայք, ամենուր, հատկապես նրանք, ովքեր այս երեկո պատգամը լսեցին, իրենց տան նույն հարցը. «Ես իրո՞ք ուզում եմ բանտարկյալ դառնալ, հանձնել իմ կյանքը»:

203 *«Որովհետև ով ուզում է իր կյանքը փրկել, պիտի կորցնի այն, իսկ ով որ իր կյանքը կորցնի Ինձ համար, կփրկի այն»:* Հա՛յր, մենք գիտենք, թե դա է նշանակում դառնալ Քո բանտարկյալ, ազատիր մեզ մեր անձնական ձգտումներից և փափագներից, որ Քո ձգտումները գտնենք, այդ ժամանակ կունենանք հավիտենական կյանք: Շնորհի՛ր դա, Տե՛ր:

204 Ինձ մնում է այս ամենը հանձնել Քո ձեռքերին: Եվ թող դա պտուղ բերի և փարավոր, փարավոր գործիքներ պատրաստի վերջին օրվա հնձի համար, թող այս տղամարդիկ և կանայք, տղաներն ու աղջիկները լիովին հանձնվեն Աստծո կամքին և դառնան Հիսուս Քրիստոսի բանտարկյալներ Նրա սիրով կապված աստվածային սիրով Քրիստոսի հետ: Մենք սա խնդրում ենք Նրա Անունով:

Քեզ կհանձնվիմ:

Վեր կենանք։

Քեզ կհանձնվիմ,
Անպայման...?...

205 Մեր աչքերը փակած և մեր ձեռքերը բարձրացրած նորից երգենք։

Քեզ կհանձնվիմ,
Քեզ կհանձնվիմ,
Անպայման օրհնյալ Փրկիչ իմ,
Քեզ կհանձնվիմ։

206 Այժմ խոնարհենք մեր գլուխները և մինչ կերգենք վերջին երգը՝ *Առ քեզ հետ Հիսուս Անունը,* ուզում եմ խնդրել, որ, որ այս եղբայրը...մոռացել եմ նրա անունը։ Բժշկված քույրը, որ վկայություն տվեց այն տեիլքի վերաբերյալ, երբ խավար էր իջել իր վրա։ Եվ հիշե՛ք, երբ հետ նայեց, վարագույրն անհետացել էր։ Նրա հավատքն արեց դա։ Կավարտե՞ս այս հավաքույթն աղոթքով, եղբայր։ Եվ խնդրեք Աստծո օրհնությունները մեզ համար։

63-0717 Բանտարկյալ
Բրանհամի Խորան
Ջեֆերսոնվիլ, Ինդիանա ԱՄՆ

ARMENIAN

©2024 VGR, ALL RIGHTS RESERVED

Voice Of God Recordings
P.O. Box 950, Jeffersonville, Indiana 47131 U.S.A.
www.branham.org

Հեղինակային Իրավունքի Ծանուցում

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքույկը կարող է տպվել տան տպիչի վրա անձնական օգտագործման համար կամ անվճար տրվել՝ որպես գործիք Հիսուս Քրիստոսի Ավետարանը տարածելու համար: Այս գրքույկը չի թույլատրվում վաճառել, պատճենահանել մեծ քանակությամբ, տեղադրել սոց. կայքերում, պահել ԷՀՄ-ում, թարգմանել այլ լեզուներով կամ օգտագործել դրամահավաքի համար առանց Voice Of God Recordings-ի գրավոր թույլտվության:

Հավելյալ տեղեկություն կամ այլ հասանելի նյութեր ձեռք բերելու համար խնդրում ենք կապ հաստատել հետևյալ հասցեով՝

VOICE OF GOD RECORDINGS
P.O. BOX 950, JEFFERSONVILLE, INDIANA 47131 U.S.A.
www.branham.org